# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

34ՐԴ. ՏԱՐԻԹԻՒ 25 (1675) ՇԱԲԱԹ, ՅՈՒԼԻՍ 5, 2014
VOLUME 34, NO. 25 (1675) SATURDAY, JULY 5, 2014

Պաշտօնաթերթ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՍԴՀԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԱՆԳԱՐԱՅԻ ՄԷՋ ՅԱՅՏԱՐԱՐԵՑ «ԱՅՍՕՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՄԵԾԱԳՈՅՆ ՀԱՐՑԸ ԿԸ ՄՆԱՅ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ ԵՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԸ»

*Կիրակի, 29 Յունիս 2014-ին, Անգարայի մէջ տեղի ունեցաւ Ընկերվարական Վերակազմեալ Կուսակցութեան (Ժ.Դ.Կ.-HDP) առաջին համագումարը: Համագումարին եկած էին Եւրոպայէն եւ Միջին Արեւելքէն հրաւիրուած ընկերվարական կուսակցութիւններու ներկայացուցիչներ: Անոնց շարքին էր նաեւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը:*

*Այս առթիւ Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան անունով Համագումարին ողջոյնի ուղերձը փոխանցեց կուսակցութեան Լիբանանի շրջանի Վարիչ Մարմնի ատենապետ Ընկ. Ալեքսան Քէօշկէրեան: Կեդրոնական վարչութեան խօսքը արժանացաւ ներկաներուն բարձր գնահատանքին: Ժողովականները քանի մը անգամ ծափողջոյններով եւ խանդավառ բացագանչութիւններով ընդհատեցին ընկերոջ ելոյթը:*

*Պաշտօնական ժողով մը տեղի ունեցաւ ՍԴՀԿ.-ի, Ժողովուրդներու Դեմոկրատական Կուսակցութեան (Ժ.Դ.Կ.-HDP) եւ Ընկերվարական Վերակազմեալ Կուսակցութեան (Ը.Վ.Կ.-SYKP) ներկայացուցիչներուն միջեւ: Ժողովին ընթացքին քննարկուեցաւ Ժ.Դ.Կ.-Ս.Դ.Հ. կուսակցութիւններու գերագոյն մարմիններու հանդիպման եւ յառաջիկային 2015 Թուականին*




**Անգարայի մէջ ելոյթ կ'ունենայ Ընկ. Ալեքսան Քէօշկէրեան**

*Ցեղասպանութեան 100 ամեակին առնչուած հարցեր: Ընթացքին հանդիպում մը տեղի ունեցաւ Ընկ. Քէօշկէրեանի եւ Անգարայի մէջ ապրող հայ մտաւորականներու եւ բարեկամներու միջեւ:*

*Ստորեւ կը ներկայացնենք ՍԴՀԿ. Կեդրոնական վարչութեան ողջոյնի խօսքը, զոր Թրքերէնով ընթերցեց ընկ. Ալեքսան Քէօշկէրեան:*

*Յարգելի բարեկամներ,*

*Օսմանեան Կայսրութեան մէջ Սոցիալ-դեմոկրատական գաղափարները տարածած առաջին կուսակցութեան անունով կ'ողջունեմ այս համագումարը: Շուրջ 125 տարի առաջ, երբ Հնչակեան Կուսակցութիւնը մուտք գործեց Օսմանեան պետութեան սահմաններէն ներս, երբ համիտեան բռնատիրութեան տակ կրօնամոլութիւնը եւ ազգայնամոլութիւնը կը տիրէին, կուսակցութիւնը իր ծրագիրին մէջ դրած էր երկու նպատակ. առաջինը՝ ազգային-ազատագրական զինեալ պայքար, որովհետեւ այդ կը թելադրէր Թուրքիոյ մէջ ապրող հայութեան եւ բոլոր փոքրամասնութիւններուն՝ որպէս մարդ ապրելու ձգտումը: Հնչակեաններս ասոր միացուցինք ընկերային ազատագրութիւնը: Օսմանեան կայսրութեան մէջ այս գաղափարին գործադրութեան հնարաւորութիւնը տրուեցաւ 1908-ի սահմանադրութենէն ետք, երբ «Ազատութեան, եղբայրութեան եւ հաւասարութեան» լոզունգին տակ Իթթիհատ վէ Թերաքքը Կուսակցութիւնը հասաւ Օսմանեան Կայսրութեան իշխանութեան: Առանց հա-*

Շար.ը էջ 5

## Ուաշինկթըն Յոյս ունի, Որ Հայաստանի ու Ատրպէյճանի Նախագահները Կ'ընդունին Ֆրանսուա Օլանտի Հրաւէրը

*Միացեալ Նահանգներու պետական քարտուղարի տեղակալ Պրենթ Հարթլի յոյս յայտնած է, որ Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահները կ'ընդունին Ֆրանսայի նախագահ Ֆրանսուա Օլանտի հրաւէրը եւ կը համաձայնին հանդիպել Փարիզի մէջ: Այս մասին Ամերիկայի ներկայացուցիչը յայտարարած է Վիեննայի մէջ՝ ԵԱՀԿ ապահովութեան հարցերով տարեկան քոնֆերանսի ժամանակ:*

*«Թէեւ Լեռնային Ղարաբաղի մէջ ԵԱՀԿ-ի դերը կ'արտայայտուի ԵԱՀԿ Մինսկի Խումբի աշխատանքով, որպէս կազմակերպութիւն մենք պէտք է շարունակենք Հայաստանին ու Ատրպէյճանին դրդել՝ ստանձնելու բանակցութիւններու պարտաւորութիւն, որոնք կը հանգեցնեն խաղաղ համաձայնութեան՝ հիմնուելով մինչեւ օրս կատարուած աշխատանքի վրայ»,- յայտարարած է Հարթլի:*

*Ըստ դիւանագէտի, Ջուիցերիոյ Նախագահ Տիտիէ Պուրկհալտըրի կառուցուածքային բանակցութիւններ վարելու կոչը նոյնպէս, կողմերուն առիթ կու տայ զարգացնելու խաղաղ գործընթա-*

Շար.ը էջ 5

## Ռուսաստանի Նախագահը Յոյսով է, Որ Մօտ Ապագային Հայաստան կը Դառնայ Եւրասիականի անդամ

*Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Փութին յոյս յայտնեց, որ մօտ ապագային Հայաստան կը դառնայ Եւրասիական Միութեան լիարժէք անդամ: Այս այս մասին յայտարարեց Յուլիս 1-ին, Ռուսաստանի բարձրաստիճան դիւանագէտներու եւ դեսպաններու հետ հանդիպման ժամանակ:*

*«Ռուսաստանն յառաջ կը տանի ինտեգրացիոն գործընթացները Անկախ Պետութիւններու Համագործակցութեան (ԱՊՀ) տարածքին ներս: Եւրասիական գործընթացի շարժիչ ուժը Ռուսաստան, Պելառուս եւ Ղազախստան եռեակն է: Եւրասիական Միութիւնն այնքան հրապուրիչ է, որ անոր կը ձգտին ԱՊՀ-ի միւս անդամ երկիրները: Յուսով եմ, որ ամենամօտ ապագային անոր անդամ կը դառնայ նաեւ Հայաստանը», - ըսաւ Փութին:*

*Ռուսաստանի Նախագահը աւելցուց, որ Եւրասիական Միութիւնը բաց է նաեւ Ռուսաստանի միւս գործընկերներուն համար: Վերջին տասնամեակին գոնէ Ռուսաստանի արտաքին քաղաքականութեան առաջնային նպատակն է խորացնել յարաբերութիւնները ԱՊՀ-ի երկիրներուն հետ, եւ ճիշդ այս նպատակին ուղղուած է Եւրասիական Միութիւնը, որու անդամ պիտի դառնայ շուտով Հայաստանը:*

*Եւրասիական Բարձրագոյն Տնտեսական Խորհուրդի Մայիս 29-ին Աստանայի մէջ կայացած ընդլայնուած նիստի ժամանակ Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսեան խնդրեց «հաստատել մինչեւ Յունիսի 15-ը Եւրասիական Տնտեսական Միութեան վերաբերեալ պայմանագրին Հայաստանի Հանրապետութեան միանալու վերաբերեալ պայմանագրի ստորագրման ժամկէտը»: Այսուհանդերձ, Եւրասիական Միութեան հիմնադիր երկրներու՝ Ռուսաստանի, Պելառուսի ու Ղազախստանի ղեկավարները եւ Հայաստանի Նախագահը պայմանաւորուեցան մնացած հարցերը համաձայնեցնել մինչեւ Յուլիսի 1-ը, իսկ մօտ երկու շաբաթ առաջ Հայաստանի վարչապետ Յովիկ Աբրահամեանի յայտարարութիւններէն պարզ դարձաւ, որ պայմանագիրը մինչեւ Յուլիսի 3-ը ստորագրուելու պատրաստ է:*

## 100,000 ՏՈԼԱՐ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԵՑԱՒ ՎԱՐԴԵՐՈՒ ՓԱՌԱՏՕՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱՂԿԱՍԱՅԼԻՆ ՀԱՄԱՐ




**Փասատինայի Վարդերու Փառատօնին մասնակցելիք հայկական ծաղկասայլի յատակագիծը**

**ՅՈՎՀ. ԱՀՄԱՐԱՆԵԱՆ**

*Վստահ եմ, թէ առաջին հայը որ ոտք դրաւ Փասատինա քաղաքը եւ տեսաւ քաղաքիս առաջին ծաղկասայլերու տողանցքը, ինքնիրեն հարցուցած պիտի ըլլար. ինչո՞ւ մենք՝ հայերս, որ երգած ենք վարդն ու մեխակը, կակաչն ու յասմիկը, ինչո՞ւ պիտի չկարենայինք հայկական թեմայով մը ներկայանալ ու հայ ծաղկասայլի մը ներկայութիւնը վայելել:*

*Արդ, աւետիս մը ունիմ տա-*

Շար.ը էջ 15

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Ինչու է Յովիկ Աբրահամեանը նոմենկլատուրան պաշտպանում հասարակութիւնից

*ԱՐՄԷՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ*

*Նախորդ շաբաթ Կառավարութեան նիստի մեկնարկին վարչապետ Յովիկ Աբրահամեանը հանդէս եկաւ մի իւրօրինակ յայտարարութեամբ: Առիթ դարձնելով ՀՀ աշխատանքի եւ սոցիալական ապահովութեան նախարար Արտեմ Ասատրեանի վրայ «Դէմ եմ» շարժման ակցիայի մասնակիցների կողմից, որպէս կուտակային համակարգի դէմ բողոքի նշան, մանրադրամներ նետելու իրողութիւնը՝ վարչապետը յայտարարեց, թէ դա անթոյլատրելի արարք է, որով խախտւում են նախարարների ու պատգամաւորների մարդկային իրաւունքները: Ըստ նրա՝ իշխանութեան ներկայացուցիչների նկատմամբ նման վարքագիծը ամենաթողութեան ու անարխիայի դրսեւորում է: Եւ քանի որ անարխիան պետական անվտանգութեանն սպառնալիք է, յանձնարարեց Արդարադատութեան նախարարին եւ Ոստիկանապետին՝ դրա դէմն առնելու ուղղութեամբ միջոցներ ձեռնարկել:*

*Քաղաքացիական ակտիւիստների կողմից դա մանրադրամ նետելու առաջին դէպքը չէր: Մինչ այդ էլ բարձրաստիճան որոշ պաշտօնեաներ, այդ թւում նաեւ նախարարներ եւ պատգամաւորներ էին աչքի ընկել քաղաքացիների նկատմամբ ոչ պատշաճ վերաբերմունքով: Սակայն նախորդ որեւէ դէպքում Յովիկ Աբրահամեանը ոչ իբրեւ նախարար, ոչ որպէս ԱԺ նախագահ եւ ոչ էլ որպէս վարչապետ, մարդու իրաւունքների նման ջերմեռանդ պաշտպանի դեր չէր ստանձնել: Ինքնին հետաքրքրական էր նաեւ այն փաստը, որ նա Կառավարութեան նիստին խօսում էր ոչ թէ առհասարակ բոլորի իրաւունքների ոտնահարման անթոյլատրելիութեան մասին, ինչը տուեալ դէպքում պէտք է լինէր միակ տրամաբանական մօտեցումը, այլ՝ բացառապէս իշխանութեան ներկայացուցիչների դէմ ուղղուած գործողութիւնների: Այնպիսի փորձառու գործչի համար, ինչպիսին Յովիկ Աբրահամեանն է, նման հասարակութեան մէջ օտարի եւ իւրայինների նման բաժանում կատարելը չի կարող զուտ պատահականութիւն լինել:*

*Ըստ էութեան վարչապետը բացայայտ ու ճակատային կերպով իր անձնական պաշտպանութեան տակ է առնում իշխանութեան ներկայացուցիչին, նոմենկլատուրայի անդամին, որը տուեալ դէպքում, զուտ պատահական համընկնման արդիւնքում, կերպարանաւորուեց Արտեմ Ասատրեանի անձով: Սա ուղերձ չէր հասարակութեանը, որն իր անպաշտպանուածութիւնը վաղուց է զգացել՝ անկախ դրա մասին Աբրահամեանի կողմից աւելորդ անգամ յիշեցումից: Այլ՝ ուղերձ էր հենց նոմենկլատուրային առ այն, որ վարչապետը պատրաստ է անմիջականօրէն ստանձնելու նրա, որպէս համակարգի, քաղաքական երշախաւորի դերն ու պատասխանատուութիւնը:*

*Այլ կերպ ասած՝ վարչապետ Յովիկ Աբրահամեանը կոնկրետ քայլ է կատարում համակարգում իր նկատմամբ վստահութիւնը բարձրացնելու եւ, վարչական ողջ ապարատն այդպիսով իրեն աւելի մերձեցնելու ուղղութեամբ: Սա քաղաքական եւ անձնական իշխանութեան ամրապնդման իւրօրինակ ակցիա էր, ինչը նշանակում է, որ Յովիկ Աբրահամեանը սկսել է իշխանութիւնը վերցնելու մի թաքուն պրոցես եւ դա սկսել է այն ոլորտից, որտեղ իր հնարաւորութիւնները եւ ազդեցութեան լծակներն այս պահին չափազանց մեծ են:*

*Նման ամբիցիոզ նպատակների հասնելու համար, ելնելով հայաստանեան քաղաքական համակարգի առանձնայատկութիւններից, Յովիկ Աբրահամեանը պէտք է կարողանայ լիակատար ազդեցութիւն եւ հեղինակութիւն դառնալ երեք հիմնական համակարգերում. բանակ եւ յատուկ ծառայութիւններ, ոստիկանութիւն, ինչպէս նաեւ բիւրոկրատիա կամ վարչական համակարգ: Դրանից յետոյ քաղաքական մակարդակում լիդերի կարգավիճակ ձեռք բերելը, հիմնուելով առնետավազքի «լաւագոյն աւանդոյթների» շարունակման վրայ, ինչպէս ասում են, դառնում է տեխնիկայի հարց:*

*Եւ ահա Յովիկ Աբրահամեանը սկսել է երրորդից, որն ի տարբերութիւն միւս երկու համակարգերի՝ իր համար աւելի հեշտ իրագործելի են: Բանակի հետ կապուած նրա ձեռքերը դեռեւս գգալիօրէն կարճ են, բայց ահա Ոստիկանութիւնը, որն իր կարգավիճակով գտնւում է Կառավարութեան ենթակայութեան ներքոյ բոլորովին այլ հարց է:*

*Եւ հիմա նա կարծես թէ վարչական ապարատին զուգահեռ փորձում է իւրացնել նաեւ այդ համակարգը: Իսկ դրա համար անհրաժեշտ է, որ Ոստիկանապետը լինի ոչ թէ նախագահի, այլ իր վստահորդը կամ առնուազն նրանց միջեւ կոնսենսուսային ինչ-որ տարբերակ: Այս իմաստով ներկայիս ոստիկանապետ Վլադիմիր Գասպարեանը նրա համար հնարաւորինս շուտ հանելու ենթակայ սեպ է, որի աքցանները, սակայն, իր ձեռքերում չեն գտնւում:*

*Վարչապետի պաշտօնում նշանակուելու հենց առաջին օրուանից Աբրահամեանը ցանկացած առիթ օգտագործում է՝ Գասպարեանի նկատմամբ իր անվստահութիւնը յայտնելու, նրա հետ ունեցած ներքին հակասութիւնները, որոնք այս պահին թւում են առաւելաբար դիրքային, զգացնել տալու համար: Այս իմաստով բոլորովին պատահական չէր, որ Կառավարութեան նիստի ժամանակ նա որոշեց հենց Վլադիմիր Գասպարեանին նկատողութիւն անել բարձր խօսելու համար: Այս վարքագիծն ուղղուած է մէկ հիմնական նպատակի. այնպիսի ճնշում գործադրել Ոստիկանապետի վրայ, նրա համար այնպիսի միջավայր ստեղծել, որոնց պայմաններում վերջինս այլընտրանք չունենայ, քան ինքնակամ հեռանալը: Այլ կերպ վարուելու տարբերակ վարչապետը չունի, քանի որ հրաշալի հասկանում է, որ Ոստիկանապետի դիրքերն ամուր են լինելու այնքան ժամանակ, քանի դեռ նա վայելում է գործող նախագահի գրեթէ լիարժէք վստահութիւնը:*

*Ոստիկանապետի գլխին սեւ ամպեր կուտակելու վարչապետի ցանկութեան ենթատեքստն ու նշանակութիւնը հասկանում են նաեւ*

*Շար.ը էջ 18*

# Քոչարեան-Սերժ Սարգսեան շո՞ւ քառեակի կատարմամբ

*ԱՆԻ ՍԱՀԱԿԵԱՆ*

*«Որոտանի հիդրոկասկադի» շուրջ տեղի ունեցող զարգացումները կարող են շրջադարձային լինել: Արդէն տեղեկութիւններ կան, որ կառավարութիւնը մտադիր է վաճառքի գործարքը չեղեալ համարել: Յիշեցնենք, որ տարեսկզբին Երեւանում ամերիկեան «Կոնտուր գլոբալ հիդրոկասկադ» ընկերութեան եւ ՀՀ կառավարութեան միջեւ կնքուեց պայմանագիր, ըստ որի, ամերիկեան ընկերութիւնը 120 մլն տոլար էր վճարելու Որոտանի հիդրոկասկադի համար եւ եւս 70 միլիոն տոլարի ներդրում պէտք է անէր: Պայմանագրով նախատեսուած էր, որ գործարքը պէտք է մինչեւ Ապրիլի կէսը աւարտուէր, սակայն մինչ օրս այն չի աւարտուել եւ գումարը վճարուած: Կողմերը բացատրութիւններ չեն տալիս, թէ ինչ խնդիրներ են ծագել: Որոշ լուրերով Որոտանի խնդիրը ոչ այնքան տնտեսական, որքան արտաքին քաղաքական եւ ներիշխանական դրդապատճառներ ունի: Այն Հայաստանի էներգետիկ համակարգի միակ օբիեկտն է, որը պէտք է ձեռք բերէր ոչ ռուսական ընկերութիւն: Երէկ պարզ դարձաւ, որ ոչ միայն ոչ իշխանական չորս կուսակցութիւններն են իրենց 12 կէտերից մէկով պահանջում ՀԷԿ-ի վաճառքը չեղեալ համարել, այլեւ այս գործարքը բացասական գնահատեց նաեւ Ռոբերտ Քոչարեանը:*

*«Քրիստոնէական վերածնունդ» կուսակցութեան ղեկավար Սօս Գիմիշեանը Hayeli.am-ի հետ զրոյցում կարծիք յայտնեց, որ խնդիրը զուտ մասնաւոր է եւ նա չի կարծում, որ արտաքին քաղաքականութեան արդիւնքում եւ մասնաւորապէս Ռուսաստանի ճնշումներով են նման գործընթացներ սկսուել: Աւելին՝ նա առաւել քան համոզուած է, որ սկսուած պրոցեսը փոխհամաձայնեցուած է քառեակի եւ իշխանութեան միջեւ. «Իշխանութիւնն ամէն ինչ անում է, որ քառեակին ճանաչել տայ իբրեւ ընդդիմութիւն, որպէսզի ապագայ ընտրութիւններում այդ երկու բեւեռը պայքարեն իշխանութեան համար: Իրականում քառեակը նոյն իշխանութիւնն է, Ռոբերտ Քոչարեանն ու Սերժ Սարգսեանը իրար մէջ բաժանել են իշխանութիւնը եւ մէկը միւսին ընդդիմութիւն է սարքում, որ իշխանութիւն վերցնի, սա շուռ է եւ նման ԱՄՆ-ի Հանրապետական եւ Դեմոկրատական կուսակցութիւնների շուրին: Հիմա նրանց առաջ քաշած պայմաններն էլ որեւէ կապ չունի իրական ժողովրդավարութեան եւ պետական շահի հետ: Իրենց պէտք է առաջ քաշեն հարցը, իշխանութիւնն էլ լուծում տայ, բայց եթէ տեսնում էք, դրանք սուտի, մանր-մունր հարցեր են, ոչ թէ քաղաքական լուրջ հարցեր»:*

*Այդուհանդերձ Գիմիշեանի համար դեռեւս աղօտ է Որոտանի շուրջ կապուած գործընթացների էութիւնը, Որոտանի կասկադի վաճառքի այս գործարքը ըստ նրա մութ ու կասկածելի տարրեր է պարունակում: «Ինձ համար իսկապէս զարմանալի է՝ ինչու եւ ինչպէս են իշխանութիւնները հրաժարւում այդ իւղոտ պատառից, որովհետեւ ես կարծում եմ, որ իրենք էլ առնում են եւ ոչ մի ամերիկեան ընկերութիւն էլ չկայ, նրանք ոչ մէկին էլ այդպիսի գնով չէին տայ: Միշտ էլ այդպէս է՝ յայտարարում են ինչ-որ ամերիկեան կառոյցների մասին, բայց իրականում դրանց տէրերը իրենք են: Բայց նաեւ ակնյայտ է՝ գործարքը չեղեալ համարելու մտադրութիւն է նկատւում, մինչդեռ գործարքը կնքուել է իրենց համար բաւական «շահաւէտ», հինգ անգամ աւելի թանկ, կառոյցը ջրի գնով են պատրաստւում վաճառել»:*

*Նա յիշեցնում է, որ Քոչարեանի ժամանակ «Գոյք պարտքի դիմաց» բոլոր օբիեկտները կոպեկներով են վաճառուել. «Հիմա թող սա էլ-ինչո՞ւ չեն նախկինների առքուվաճառքի պայմանագրերը չեղեալ յայտարարելու պահանջ բարձրացնում, թող ճնշեն եւ հետ պահանջեն» հարցադրում է անում նա ու նկատում, որ Քոչարեանը քառեակին քաշել է թեւի տակ ու փորձում է ընդդիմութիւն ցոյց տալ:«Ես կարծում եմ, որ Որոտանը էլի կը վաճառեն, բայց աւելի յարմար տարբերակով, կամ էլ գնորդի փողերը չի հերիքել, ատկաները չի տուել ժամանակին, հիմա յետ են կանչում: Պետական շահը բացառւում է, պարզապէս այլ շահաւէտ տարբերակ են գտել»:*

*«ՀԱՅԵԼԻ»*

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

# «Էլեկտրաէներգիայի Թանկացումը Քաղաքացիների Գրպանից Գողութիւն է»



*Տեսարան մը Երեւանի մէջ տեղի ունեցող բողոքի ցոյցերէն՝ ընդդէմ էլեկտրաուժի սակագիներու բարձրացման*

«168 ժամ» թերթի տնտեսական մեկնաբան Բաբկէն Թունեանն անհիմն է համարում էլեկտրաէներգիայի սպասուող թանկացումը եւ դա քաղաքացիների գրպանից գողութիւն է որակում:

«Ընդունելի չեմ համարում թանկացման փորձերը՝ այն պատճառով, որ պետական կառոյցը ինքը որպէս նախաձեռնող է հանդէս գալիս ու փորձում է սեփական նախաձեռնութեամբ սեփական բնակիչների հաշուին փակել ինչ-որ մասնաւոր ընկերութեան կրած վնասները, երբ էդ մասնաւոր ընկերութիւնը ինքն իր ապաշնորհ ղեկավարման պատճառով է այդ վնասները կրել», - «Ազատութեան» հետ զրոյցում ասաց Թունեանը՝ շարունակելով. - «Նոյն պատճառաբանմամբ ցանկացած ապրանք թանկացնում են ցանկացած տնտեսվարող սուբիեկտի համար, ինչը համարում եմ սխալ: Ուղղակի այստեղ աւելի սկզբունքային է հարցը՝ եթէ անգամ կէս դրամ են մարդկանցից գողանում, ուրեմն պէտք է թոյլ չտալ գողանալ:

Բաբկէն Թունեանը սա շանտաժ է համարում: Նրա խօսքով՝ նոյնը փորձում են անել տրանսպորտի դէպքում՝ ասելով, թէ գծատէրերը վնասով են աշխատում եւ չեն կարողանում պահեստամասեր գնել մեքենաների համար:

«Ինչպէս տեսնում ենք՝ տրանսպորտը մինչեւ հիմա աշխատում է, ու ոչ մի գծատէր իր գիծը ոչ մէկին զէնքի սպառնալիքով էլ չի զիջի, եթէ դա էդքան շատ վնասաբեր լինէր, հիմա շուտուանից ինքնակամ հրաժարուել էին: Իսկ հովհարային անջատումների մասին եւ նման այլ բաների մասին խօսակցութիւններն ուղղակի շանտաժի ձեւ է», - ընդգծեց մեկնաբանը:

Մարդիկ այլեւս չեն վստահում բերուող պատճառաբանութիւններին, եւ սա, տնտեսական մեկնաբանի կարծիքով, աւելի մեծ խնդիր է, քան թանկացման հետեւանքով սոցիալական ճգնաժամի խորացումը:

«Եթէ մենք հիմա հետ ենք գնում ու նախորդ տարուայ թանկացումը վերանայում ենք, երբ որ կրկին չորս դրամով թանկացրին հոսանքը, ստացւում է, որ Հայաստանում վերջին մէկ տարուայ ընթացքում էլեկտրաէներգիայի գինը մօտ 40 տոկոսով թանկացել է, ու էս պայմաններում մարդկանց մօտ վստահութիւն չկայ, որ մէկ տարի յետոյ նորից ինչ-որ ֆինանսական ճեղքուածք չի առաջանայ ու նորից հարկ չի լինի մի հինգ դրամով նորից աւելացնելու: Այսինքն՝ վստահութեան բացակայութիւնն է ամենագլխաւոր խնդիրը», - ասաց Թունեանը:

# Մեղադրողը 6.5 Տարուայ Ազատազրկում Պահանջեց Վոլոդիա Աւետիսեանի համար

Ազատամարտիկների բողոքի ակցիաներ նախաձեռնելուց յետոյ խարդախութեան մէջ մեղադրուած ու կալանաւորուած Վոլոդիա Աւետիսեանի համար մեղադրողը 6.5 տարուայ ազատազրկում պահանջեց: Եթէ դատարանը բաւարարի այս պահանջը, ապա պաշտօնաթող գնդապետի վրայ համաներումը չի տարածուի:

Դատախազ Վարդան Պապիկեանը յայտարարեց, թէ խարդախութեան եւ խարդախութեան փորձի մէջ մեղադրուող պահեստազօրի գնդապետ Աւետիսեանի համար մեղմ պատիժ են պահանջում՝ հաշուի առնելով նրա անցած ճանապարհը, խնամքին անչափահաս երեխաների առկայութիւնը:

Վոլոդիա Աւետիսեանն իր խօսքում յայտարարեց, որ չի ընդունում մեղադրանքն ու պնդեց, որ իշխանութիւնները սրանով պարզապէս փորձում են պատժել իրեն անցած տարի նախաձեռնած բողոքի ակցիաների համար: Յայտարարեց, որ Ազգային Անվտանգութեան Ծառայութեան կողմից իր հեռախօսային խօսակցութիւնների գաղտալսումներն այս գործով վկաների հետ ոչ այլ ինչ են, եթէ ոչ մոնտաժուած ձայնագրութիւններ:

«Ես իմ արարքների մէջ ոչ մի յանցագործութիւն չեմ տեսնում: Ամէն ինչը սարքած է, ինձ բազմիցս մօտեցել են պատգամաւորներ, ծառայողներ, զգուշացրել են՝ գլխիդ կը սարքեն»,- ասաց նա:

Մեղադրող Պապիկեանը դատարանին նաեւ առաջարկեց յօգուտ պետութեան Աւետիսեանից բռնագանձել այն 2000 դոլարը, որը, ըստ մեղադրանքի, նա վերցրել է այս գործով կարեւոր վկայի Հենրիկ Զաքարեանից որպէս կաշառք: Հարկ է նշել, որ այս քրէական գործում կաշառքի մասով մեղադրանք Աւետիսեանին առաջադրուած չէ: Վկան, դատարանում յայտարարել էր, թէ Աւետիսեանից պարտք ու պահանջ չունի:

Ազատամարտիկի պաշտպան Զաքարեանն, անդրադառնալով մեղադրողի բերած փաստարկներին, նշեց, որ նա իրականում չկարողացաւ ապացուցել, որ Աւետիսեանը խարդախութիւն է կատարել եւ պահանջեց արդարացնել նրան: Պնդեց, թէ նախաքննութեան, թէ դատաքննութեան ժամանակ իրենց այդպէս էլ հնարաւորութիւն չտրուեցին համակողմանի պաշտպանութիւն ապահովել

# «Ժառանգութիւնում Պատերազմական Վիճակ Չկայ». Արմէն Մարտիրոսեան

«Ժառանգութիւն» կուսակցութիւնում պատերազմական վիճակ չկայ. այսօր լրագրողների հետ հանդիպմանն ասաց կուսակցութեան փոխնախագահ Արմէն Մարտիրոսեանը:

«Ըստ էութեան, մենք տեսանք, որ նախահամագումարեան շրջանում բաւական յօդուածներ էին տպւում «Ժառանգութեան» հասցէին, որ Րաֆֆի Յովհաննիսեանը հեռանալու է կուսակցութիւնից, որ կուսակցութիւնում պատերազմական վիճակ է, ռուսամէտներ են յայտնուել կուսակցութիւնում եւ այլն, եւ այլն: Իրականութիւնը բոլորովին այլ է, եւ համագումարը դա ցոյց տուեց»,-ասաց նա:



*«Ժառանգութիւն» կուսակցութեան փոխնախագահ Արմէն Մարտիրոսեան*

Արմէն Մարտիրոսեանը յստակեցրեց, որ «Ժառանգութիւնը» հայաստանակենտրոն քաղաքական ուժ է, բայց ըստ իրենց՝ Հայաստանի արտաքին քաղաքական կողմնորոշումը պէտք է լինի եւրաինտեգրումը: «Կողմ ենք Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Չինաստանի հետ խորը յարաբերութիւններին, Վրաստանի հետ բարեկամական յարաբերութիւններ պէտք է զարգանան»,-ասաց նա:

Արմէն Մարտիրոսեանը շարունակեց, թէ ողջունում են խորհրդարանի չորս ուժերի համագործակցութիւնը, սակայն նաեւ ցանկութիւն ունեն, որ խորհրդարանական համագործակցութիւնից աւելի լայն համագործակցութեան շրջանակ դուրս գալու:

Թէ ինչու Րաֆֆի Յովհաննիսեանը համագումարին կրկին շեշտեց ամբողջական իշխանափոխութեան հարցը, եւ արդեօ՞ք դա ուղղուած չէր քառեակի միւս անդամներին, որ պէտք է սկսել ամբողջական իշխանափոխութիւն, Արմէն Մարտիրոսեանը նշեց, որ իրենք միշտ էլ արմատական փոփոխութիւնների կողմնակից են եղել եւ շարունակում են մնալ: Իսկ թէ ինչու այդպէս էլ չի դրւում այդ հարցը՝ նա պատասխանեց. «Մէկ կուսակցութեան ներսում է դժուար որոշումներ կայացնել, տարբեր կարծիքներ են լինում, եւ խորհրդարանական չորս ուժերն էլ տարբեր մօտեցումներ ունեն, 12 կէտերն արդէն փոխհամաձայնութեան եւ փոխզիջման արդիւնք է»:

Կուսակցութեան փոխնախագահը նշեց, թէ քառեակից ՀԱԿ-ն էլ իրենց պէս արմատական փոփոխութիւնների կողմնակից է, ՀՅԴ-ն էլ նոյն կարծիքն է, իսկ ԲՀԿ-ն ոչ մէկ անգամ է նշել, որ չքննարկուող հարց գոյութիւն չունի:

Նա նշեց, թէ քառեակի տուած ժամկէտին շատ չի մնացել եւ պէտք է սպասել աշնանը:

Մեզանում մարդիկ խելամիտ մտքեր արտայայտում են պաշտօնանկութիւնից յետոյ.

# Ալեքսանդր Արզումանեանը Քոչարեանի եւ Օսկանեանի մասին

Հայաստանում քաղաքական գործիչները սկսում են օբիեկտիւ, սուր մտքեր արտայայտել միմիայն պաշտօնանկութիւնից յետոյ:

Այս մասին լրագրողների հետ հանդիպմանը յայտարարեց ԱԺ պատգամաւոր, նախկին արտգործնախարար Ալեքսանդր Արզումանեանը՝ անդրադառնալով 2-րդ նախագահ Ռոբերդ Քոչարեանի հարցազրոյցին, եւ նրա՝ նախկին վարչապետ Տիգրան Սարգսեանի հետ յայտնի բանավէճին՝ տնտեսական «փուչիկների» մասով:



*Աժ պատգամաւոր Ալեխանդր Արզումանեան*

«Ես չեմ կարող ասել՝ Քոչարեանը խօսելու բարոյական իրաւունք ունի՞, չունի՞... Ես ինքս Քրիստոսը չեմ, որ գնահատականներ տամ, միայն կարող եմ ցաւով նշել, որ մեզանում խելամիտ եւ օբիեկտիւ մտքեր սկսում են արտայայտել իշխանութիւնը թողնելուց յետոյ»,-յայտարարեց Ալ. Արզումանեանը եւ աւելացրեց. «Բազմաթիւ խնդիրներ էր առաջ քաշել, մասնաւորապէս, Տիգրան Սարգսեանի հետ բանավէճում, որոնք իր օրօք էին հասունացել եւ շատ աւելի ճակատագրական կարող էին լինել այն առումով, որ ինքը կարող էր Կենտրոնական Բանկի իր կառավարչին (Տիգրան Սարգսեանին) կանգնեցնել ու ասել՝ «փուչիկներ մի ստեղծիր»»:

Նա այս համատեքստում բերեց «Բարգաւաճ Հայաստանի» պատգամաւոր, նախկին արտգործնախարար Վարդան Օսկանեանի օրինակը, ում յարգում է եւ համարում է Հայաստանի լաւագոյն արտգործնախարարներից մէկը:

«Բայց ուզում եմ նշել, որ կոռեկտ եւ սուր գնահատականները տալիս է բացառապէս 2008 թուականից յետոյ: Ողջ տասնամեակում, երբ պաշտօնավարում էր, ինքը որեւէ խնդիր չէր տեսնում՝ ո՛չ ղարաբաղեան կարգաւորման, ո՛չ այլ որեւէ խնդիր չէր տեսնում»,-ամփոփեց ԱԺ պատգամաւորը

## ԼՈՒՐԵՐ

### Սէյրան Օհանեան. «Մենք Ի Վիճակի Ենք Առանց Արտաքին Միջամտութեան Սահմանին Պահպանել Հաւասարակշռութիւնը»



ՀՀ պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեան սահմանային գօտի կատարած շրջագայութիւններէն մէկուն ընթացքին

ՀՀ պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանը չի կարծում, որ Ադրբեջանի հետ սահմանին իրավիճակն այնքան է սրուել, որ անհրաժեշտ է դիմել ՀԱՊԿ-ին: Այս մասին նախարարն ասաց Յուլիսի 1-ին լրագրողների հետ զրոյցում:

Սէյրան Օհանեանը յիշեցրեց, որ գոյութիւն ունի ՀԱՊԿ-ին դիմելու որոշակի մեխանիզմ: Առաջին հերթին գնահատւում է իրավիճակը, որոշւում է մարտական գործողութիւնների վերսկսման հաւանականութեան աստիճանը: «Չեմ կարծում, որ հիմա իրավիճակն այնպիսին է, որ ՀԱՊԿ-ին դիմելու անհրաժեշտութիւն է առաջացել: Հայոց բանակն օրէցօր աւելի մարտունակ է դառնում եւ ունակ է ինքնուրոյն լուծել առաջադրուած խնդիրները»,- ընդգծեց նախարարը՝ յիշեցնելով, որ ղարաբաղեան հակամարտութիւնն աշխարհում միակն է, որտեղ հրադադարի ռեժիմը պահպանւում է առանց արտաքին միջամտութեան: «Երբ խօսում ենք հաւասարակշռութեան մասին, խօսքը ոչ թէ քանակի, այլ որակի եւ մեր զինուորների մարտական ոգու մասին է»,- ասաց Սէյրանը Օհանեանը:

«Այլ հարց է, որ ՀԱՊԿ-ն պէտք է տեղեկացուած լինի խախտումների մասին եւ հանդէս գա համապատասխան յայտարարութեամբ, ընդգծի, թէ ով է խախտման նախաձեռնողը: Անմիջապէս ասեմ, որ հայկական կողմը երբեք հանդէս չի գալիս խախտման նախաձեռնողի դերում, մենք միայն պատասխանում ենք ոտնձգութիւններին»,- ընդգծեց Սէյրան Օհանեանը:

### Թուրքիայում Հրապարակել է Հայոց Ցեղասպանութեան Ժողովածուի Թուրքերէնը

«Հայոց ցեղասպանութիւնը Օսմանեան Թուրքիայում. վերապրածների վկայութիւններ» արխիւային փաստաթղթերի եռահատոր ժողովածուի առաջին հատորի թուրքերէն տարբերակի հրատարակմամբ գործնականում լիարժէք է դառնում այդ նիւթերի հետ կապուած փաստերի ներկայացումը: Այդ մասին Յուլիսի 2-ին, մամուլի ասուլիսին յայտարարել է եռահատոր ժողովածուի մէկ հատորի թուրքերէն թարգմանութեան հրատարակիչ, մարդու իրաւունքների պաշտպան Ռագըփ Զարաքօլուն:



Մարդու իրաւունքներու պաշտպան Ռագըփ Զարաքօլու

«Ինձ շատ է յուզել գրքի թուրքերէն տարբերակի հրապարակումը, քանի որ դա «Վան» հասարակական կազմակերպութեան օգնութեան շնորհիւ իրականացուած օպերատիւ աշխատանքի արդիւնք էր», - նշել է Զարաքօլուն: Նրա խօսքով՝ նրանք Թուրքիայում տպագրել են նաեւ Հայոց ցեղասպանութեան մասին գերմաներէն փաստաթղթեր, բացի այդ, Վերժինէ Սւազլեանի՝ իր ամբողջ կեանքի ընթացքում հաւաքած փաստաթղթերը:

Նշենք, որ «Հայոց ցեղասպանութիւնը Օսմանեան Թուրքիայում. վերապրածների վկայութիւններ» եռահատոր ժողովածուն հայերէնով հրատարակուել էր 2012թ.: Ժողովածուի մէջ տեղ են գտել Վան, Բիթլիս, Էրզրում, Խարբերդ, Դիարբեքիր, Սեբաստիա, Տրապիզոնի նահանգներում եւ Պարսկահայքի շրջանում Ցեղասպանութեանը վերապրածների 602 վկայութիւններ: Դրանք շատ կարեւոր փաստաթղթեր են, որոնք կարող են ծառայել՝ որպէս միջազգային նշանակութեան վկայութիւններ: 2013թ. եռահատորյակից առանձնացուել էին 145 վկայութիւններ, որոնք թարգմանուել եւ հրատարակուել անգլերէնով: Մօտ ապագայում նախատեսւում է նաեւ հրատարակել գրքի ռուսերէն, իսպաներէն եւ ֆրանսերէն թարգմանութիւնները:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

### «Ուժեղ Հայաստանը Բխում Է Միացեալ Նահանգների Շահերից». Ջոն Հեֆերն



Հայաստանի վարչապետ Յովիկ Աբրահամեան կը շնորհաւորէ Միացեալ Նահանգներու անկախութեան տօնը: Կողքին դեսպան Ջոն Հեֆերն

Յուլիսի 2-ին ՀՀ-ում ԱՄՆ դեսպանութիւնը նշել է Միացեալ Նահանգների անկախութեան 238-րդ տարեդարձը: Ինչպէս յայտնում են ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատնից՝ դեսպանատանը տեղի ունեցած հանդիսաւոր միջոցառման ընթացքում դեսպան Ջոն Հեֆերնը եւ ՀՀ վարչապետ Յովիկ Աբրահամեանը բարձր են գնահատել հայ-ամերիկեան սերտ գործընկերութեանը:

Դեսպան Հեֆերնն իր խօսքում նշել է. «Ուժեղ Հայաստանը բխում է Միացեալ Նահանգների շահերից: Մեր խորացող տնտեսական եւ մշակութային կապերը այս երկրում մեր ունեցած բաբազմաթիւ գործընկերութիւնների արգասիքն են: Յուսով եմ, որ այսօր բոլորս կը խոստանանք աշխատել միասին՝ խորացնելու կապերը Միացեալ Նահանգների եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ»:

Նա ողջունել է այն բազմաթիւ խմբերին, կազմակերպութիւններին ու անհատներին, ովքեր գործակցում են ԱՄՆ դեսպանութեան հետ եւ խրախուսել, որ նրանք գործակցեն նաեւ միմեանց հետ:

Երեկոյի ընթացքում հնչել է ամերիկեան քանթրի երաժշտութիւն հայկական «Իմեջին Բենդ» խմբի կատարմամբ եւ ներկայացուել են քանթրի խմբապարեր «Նանէ» պարային ստուդիայի կողմից: Գագիկ Գինոսեանը եւ նրա «Կարին» համոյթը ներկայացրել են հայկական աւանդական երգ ու պար:

### Ցեղասպանութեան 100-Ամեակին Ընդառաջ՝ Հայ-Ֆրանսիական Գիտաժողովի Առաջարկ

Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարար Արմէն Աշոտեանն Յուլիսի 2-ին, ընդունել է ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպան Անրի Ռենոյի գլխաւորած պատուիրակութեանը, որի կազմում էր նաեւ Ֆրանսիայի բարձրագոյն կրթութեան եւ հետազօտութիւնների նախարարութեան միջազգային բաժնի հետազօտութիւնների պատասխանատու Ժան Լուկ Կլեմենը:

Ողջունելով հիւրերին՝ նախարարը նշել է, որ այս հանդիպումը վերջերս Հայաստան այցելած Ֆրանսիայի նախագահի եւ Ֆրանսիայի կրթութեան նախարարի հետ հանդիպումների տրամաբանական շարունակութիւնն է: Վերջինիս խօսքով՝ այցելութիւնները իմաստաւորւում են, երբ տեղի են ունենում դրանց յաջորդող շարունակական գործընթացներ եւ հետեւողական մօտեցում՝ նախանշուած ձեռնարկներին: Արմէն Աշոտեանը նշել է, որ երկու երկրների համագործակցութեան ոլորտում ուրուագծուել է աշխատանքների ընդհանուր շրջանակը, այն է՝ երիտասարդ գիտական կադրերի պատրաստում եւ հետազօտութիւնների անցկացում արտերկրում: Նախարարը կոչ է արել նոր պայմաններ ստեղծուել վերջիններիս համար՝ հաշուի առնելով երկկողմանի եւ միջազգային ծրագրերը, մասնաւորապէս, եւրոպական գիտական նոր նախագիծը՝ «Հորիզոն-2020»: Բացի այդ, Արմէն Աշոտեանն առաջարկել է Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին ընդառաջ կազմակերպել հայ-ֆրանսիական գիտաժողով՝ ներգրաւելով բուհերի ներկայացուցիչներին: «Ֆրանսիան այն քաղաքակիրթ երկրներից է, որը ճանաչել է Հայոց Ցեղասպանութիւնը: Բացի այդ, Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդը պատրաստակամութիւն է յայտնել մասնակցել 100 -ամեակի միջոցառումներին»,-այդ կապակցութեամբ նշել է նախարարը:

Դեսպանի խօսքով՝ գիտահետազօտական ոլորտում երկու երկրների միջեւ առկայ է լայն համագործակցութիւն, մասնաւորապէս, երկրաբանութեան, աստղաֆիզիկայի, բժշկագիտութեան եւ հնէաբանութեան ոլորտներում: Նա նշել է որդեգրած քաղաքականութեան երեք բաղադրիչ՝ ամրապնդել առկայ համագործակցութիւնը, լրացնել բացերը եւ ընդհանուր նոր եզրեր գտնել՝ գիտահետազօտական ոլորտում:

Ժան Լուկ Կլեմենն իր հերթին նշել է, որ Հայաստանն առանձնայատուկ կարգավիճակ ունի Ֆրանսիայի կրթութեան նախարարութեան համար, մանաւանդ, որ Ֆրանսիան Հայաստանի գործընկերների թւում՝ գիտահետազօտական ոլորտում զբաղեցնում է չորրորդ տեղը՝ ՌԴ-ից, ԱՄՆ-ից եւ Գերմանիայից յետոյ: Ըստ նրա՝ անհրաժեշտ է սերտացնել այդ փոխգործակցութիւնը:

Հանդիպման ընթացքում քննարկուել են նաեւ երիտասարդ գիտաշխատողների, թէզերի պաշտպանութեան համատեղ համակարգի, դիպլոմների փոխճանաչման, ֆրանսիական համալսարանին գիտահետազօտական բուհի կարգավիճակ տալու եւ այլ հարցեր:

Հանդիպման աւարտին Արմէն Աշոտեանը հրաւիրել է Ֆրանսիայի կրթութեան նախարարին՝ այցելել Հայաստան ինչպէս երկկողմանի այցի, այնպէս էլ Բոլոնիայի նախարարական գագաթաժողովի շրջանակում:

## ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

### ԻՐԱՔԻ ՆՈՐԱՅԱՅՏ ՄԱՐՏՆՉՈՂՆԵՐՈՒ ԽՈՒՄԲԸ՝ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱՀԱՐՈՒՍՏՆ ՈՒ ՄԱՐՏՈՒՆԱԿՆ Է



Վերջին ամիսներուն շատ կը խօսուի Իրաքի մէջ նոր ծաւալ ստացած ՍԻԻՊԻ (Սուրիոյ եւ Իրաքի Իսլամական Պետութիւն) այլ խօսքով ISIS-ի մասին, որ Պաղտատի արեւմուտքը գտնուող զօրանոց մը գրաւելով, սկսաւ արագ եւ լայնածաւալ գործունէութիւն ծաւալել բովանդակ երկրին մէջ: «Ալ Քայտա» զօրախումբի հետ առնչուող այս նոր կազմակերպութիւնը՝ չուտով իր հակաչուին տակ առաւ մեծ մասամբ սիւննի դաւանանքի պատկանողները, զօրանոցներն ու ռազմախարիսխները, մասնաւորաբար Իրպիլի եւ Ֆալուճայի մէջ: Յետագային իրենց գերակայութիւնը ծաւալելով հասան մինչեւ Մուսուլ եւ Հիւսիսային ու արեւմտեան Իրաք: Այս բոլորի շարժառիթը Իրաքի Կեդրոնական Կառավարութեան որդեգրած խտրական եւ կողմնակալ քաղաքականութիւնն էր: Արդարեւ Վարչապետ Նուրի Ալ Մալիքիի կազմած դահլիճը մեծ մասամբ շիիներէ բաղկացած նախարարներ կը պարփակէր երեւոյթ մը որ արդիւնք էր անհեռատես քաղաքականութեան մը, պատճառ դառնալով ներկայ պառակտեալ եւ կործանարար վիճակին:

Ներկայիս ՍԻԻՊ-ի զինեալներն արդէն գրաւած են Իրաքի բանակի Քըրքուք քաղաքի զօրապահեստները, ինչպէս նաեւ Մուսուլի եւ Տիարայի զօրանոցները: Գնդապետ Ապտուլ Ռազաք Ապու Պիլալի համաձայն զէնքեր եւ զինեալներ պիտի տրամադրեն Սուրիոյ ապստամբներուն: Անցնող շաբթուան ընթացքին Սուրիական Պուքամալ աւանի ըմբոստ ուժերու հրամանատարութիւնը իր ամբողջական զօրակցութիւնը յայտնած է ՍԻԻՊ-ի:

Իրերու այս կացութեան ներքեւ շուրջ 500 հազար իրաքցիներ գաղթած են դէպի երկրի հիւսիսը գտնուող քրտաբնակ շրջանները: Միւս կողմէ Իրաքի քիւրտերը լրջօրէն կ՚ուսումնասիրեն քաղաքական ներկայ խռովայոյզ իրավիճակը եւ շատ հաւանաբար յայտարարեն Քիւրտիստանի Ինքնավար Հանրապետութիւն: Նման պարագային Իսրայէլ ըսած է թէ ինք առաջինը պիտի հանդիսանայ ճանչնալու քրտական պետութիւնը: Թրքական իրազեկ շրջանակներ եւս պատրաստակամութիւն յայտնած են ճանչնալու Քիւրտիստանը:

### 500 ՄԻԼԻՈՆ ՏՈԼԱՐԻ ՕԳՆՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԻՈՅ ԸՄԲՈՍՏՆԵՐՈՒՆ

Վերջերս ԱՄՆ-ի պետական քարտուղար Ճօն Քեռի Սէուտական Արաբիա տուած իր այցելութեան ընթացքին հանդիպումներ ունեցաւ երկրի վեհապետին եւ այլ պատասխանատու շրջանակներու հետ, միասնաբար քննելու տարածաշրջանը յուզող հարցերը: Այս ծիրէն ներս Ճօն Քեռի տեսակցեցաւ նաեւ Սուրիոյ ընդդիմադիր ուժերու պետ Ահմատ Ժարպայի հետ: Խօսակցութեանց նիւթերէն մին էր ընդդիմադիր ուժերու փոխարինող կառավարութեան մը կազմութիւնը, որուն շատ համամիտ չեղաւ ԱՄՆ-ի կառավարութիւնը: Այսուհանդերձ կը ծրագրուի 500 միլիոն տոլար տրամադրել ընդդիմադիրներուն, յատկացուելու զինավարժութեան եւ այլ յարակից կարիքներու: Միւս կողմէ սուրիական իշխանութիւնները կը մերժեն ճանչնալ ընդդիմադիրներու համախմբումը, գայն նկատելով խամաճիկ ԱՄՆ-ի եւ Ասատի ընդդիմացող արտասահմանցիներու համար:

### ՊԱՂԵՍՏԻՆԻ ԱՆԴՈՐՐՈՒԹԻՒՆԸ ՎՏԱՆԳՈՒԱԾ ԻՍՐԱՅԷԼԱՑԻ 3 ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ ԴԻԱԿՆԵՐՈՒ ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԷՆ ԵՏՔ

Յունիս 12ին 3 իսրայէլացի պատանիներու առեւանգումը պաղեստինցիներու կողմէ, մեծ իրարանցում եւ բազմահարիւր ձերբակալութիւններու առիթ տուած էր, որոնց հետեւած էր նաեւ ահաբեկչական արարքներ եւ ռմբակոծումներ: Այս բոլորէն ետք անցեալ Երկուշաբթի Արեւմտեան ափին վրայ յայտնաբերուեցան երեք պատանիներու դիակները: Պաղեստինի պետութեան գլխաւորը՝ Մահմուտ Ապպաս դատապարտեց արարքը: Այսուհանդերձ Իսրայէլի պետական շրջանակները կ՚ամբաստանեն Համաս կազմակերպութիւնը, զայն նկատելով ահաբեկչական կառոյց, որ մաս կը կազմէ նաեւ պաղեստինեան նորակազմ կառավարութեան: Նաթանեահուի համաձայն Համաս պատասխանատու է այս արարքին եւ պիտի վճարէ անոր գինը:

### ՈՒԱԼԻՏ ՃԱՄՊԼԱԹ »ԱՄԵՐԻԿԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՁԱԽՈՂԱԾ Է ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ«

Լիբանանի Յառաջդիմական Սոցիալիստ Կուսակցութեան նախագահ Ուալիտ Ճամպլաթ, որ միաժամանակ Ազգային Պայքարի Ճակատի ղեկավարն է, տեղական թերթի մը մէջ յայտարարութիւն մը կատարելով ըսած է «Ամերիկայի քաղաքականութիւնը ձախողած է Միջին Արեւելքի մէջ»: Այս բոլոր հետեւանքն էր ԱՄՆ-ի Միջին Արեւելքի հաշտարար բանագնաց Մարթին Ինտիքի եւ իր նախորդին՝ Տէնիս Ռոսի ներկայացուցած հրաժարականները:

Գալով Լիբանանի հրաժարեալ Հանրապետութեան նախագահը փոխարինող նորի մը ընտրութիւնը լուրջ խոչընդոտներու առջեւ կը գտնուի եւ հեռու է մօտալուտ լուծում մը կայացնելը:

## ԴԱՄԱՍԿԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ՎԵՐՋԻՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԷՆ ՍԵՒԱԿ ԷՕԼՄԷՍԷՔԵԱՆ



Ցաւով իմացանք Դամասկահայ գաղութի երիտասարդ սերունդի ներկայացուցիչներէն՝ սուրիական բանակի սպայ Սեւակ Էօլմէսէքեանի մահը: Հանգուցեալը Սուրիոյ պաշտպանական բանակի Իտլիպ նահանգի զօրանոցին մէջ ծառայած պահուն հակառակորդ ուժերու կողմէ բուռն յարձակումներու ենթարկուելով նահատակուեցաւ 250 այլ զինուորներու հետ:

Սեւակ Էօլմէսէքեան փոքր տարիքին անդամ եղած է Դամասկոսի Հ.Մ.Մ.ի սկաուտական խումբին: 28-ամեայ Սեւակը սուրիական բանակին իր շարունակական ծառայութիւնը բերած է զանազան շրջաններու մէջ: Իր հոգւոյն համար անցեալ Կիրակի, Յունիսի 27ին հոգեհանգստեան պաշտօն տեղի ունեցաւ Լոս Անճելոսի, Պաթօն Ռուժի եւ Դամասկոսի Հայց. Առաքելական եկեղեցիներուն մէջ:

Մեր խորազգաց ցաւակցութիւնները հանգուցեալի ընտանիքի անդամներուն, Հ.Մ.Մ.ի Դամասկոսի Վարչութեան եւ համայն պարագաներուն:

## ՍԴՀԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԱՆԳԱՐԱՅԻ ՄԷՋ

Շարունակուած էջ 1-էն

ւատալու անոր, ստեղծուած նոր կացութենէն ելած Հնչակեաններս վար դրինք ազատագրական պայքարի մեր զէնքը եւ ամբողջապէս նուիրուեցանք նոր Թուրքիան բարեփոխելու ընկերային եւ քաղաքական պայքարին: Այդ պայքարը շատ հարուստ է, բայց մինչեւ այսօր պատմութեան մէջ լիովին մեկնաբանուած չէ: Միայն ըսենք, որ Հնչակեան երեսփոխան Մուրատի (Համբարձում Պոյաճեան) միջոցով է որ Օսմանեան խորհրդարանին մէջ առաջին անգամ ըլլալով արծարծուեցան կանանց աշխատանքի իրաւունքին, անչափահասներու աշխատանքին, պարտադիր միջնակարգ կրթութեան, տուրքերու յառաջատուական ձեւին մասին գաղափարներ: Հնչակեան գործիչ Գարեգին Կոզիկեանի միջոցով է որ հիմնադրուեցան առաջին սենտիքաները եւ տօնակատարուեցան առաջին Մայիս 1-ի տարեդարձները: Տակաւին կարելի է երկարել այս շարքը:

1915 թուականը կացինի հարուած հասցուց այս շարժումին: Հայ ժողովուրդը ենթարկուեցաւ ցեղասպանութեան: Անոր զուգահեռ Հնչակեան Կուսակցութիւնը ենթարկուեցաւ դատարանի եւ իր ղեկավարութիւնը զոհ տուաւ Պոլսոյ Սուլթան Պայազիտ հրապարակին վրայ, Վանի բանտին ու տարբեր քաղաքներու մէջ:

Այսօր, հայ ժողովուրդի մեծագոյն հարցը կը մնայ ցեղասպանութեան ճանաչումը եւ փոխ հատուցումը:

Այս ճամբուն վրայ, Հնչակեաններս խորին շնորհակալութիւն ունինք բոլոր անոնց՝ յատկապէս Թուրք եւ քիւրտ բարի մարդոց հանդէպ, որոնք արհաւիրքի այդ ծանր օրերուն, վտանգելով նոյնիսկ իրենց կեանքը, օգնութեան ձեռք մեկնեցին անտէր ու անօգնական, ջարդուելու ստոյգ վտանգին տակ գտնուող մեր ժողովուրդի զաւակներուն: Մենք շնորհակալական խորին զգացում ունինք այն ժողովուրդներուն եւ պետութիւններուն, որոնք մեր բռնագաղթած ժողովուրդը ընդունեցին եւ անոր գոյատեւման ու զարգացման պայմաններ տուին: Առանձնաբար ողջոյնի խօսք ունինք ըսելիք ազատախոհ եւ արդարամիտ այն մտաւորականներուն եւ կուսակցութիւններուն, որոնք քաջութիւնը ունին առերեսուելու պատմութեան հետ եւ յանուն ճշմարտութեան ընդունելու Հայոց Ցեղասպանութեան իրողութիւնը:

Այսօր, ես եւ իր հերոսական անցեալով ծանօթ իմ պատկանած կուսակցութիւնս կը գտնուինք այդ քաջարի եւ պատմական նշանակութիւն ունեցող կեցուածքը որդեգրած կուսակցութեան դիմաց:

Մեր փոխգործակցութեան կարճ ժամանակի փորձը մեզ համոզեցին որ իր կեցուածքներուն մէջ համոզուած ու հետեւողական է:

Ուստի Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան անունով կ՚ողջունեմ Ընկերվարական Վերակազմեալ Կուսակցութեան համագումարը: Անոր կը մաղթեմ յաջողութիւն իր քաղաքական եւ ընկերային նպատակներուն մէջ: Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեակի սեմին կը մաղթեմ, որ այս բարեկամական յարաբերութիւնը դառնայ նախադէպ մը հայ-թուրք յարաբերութեան մէջ նոր ուղիներու որոնման համար: Յարաբերութիւն մը, որ կրնայ միայն հիմնուած ըլլալ արդարութեան եւ ճշմարտութիւնները ընդունելու սկզբունքներուն վրայ:

## Ուաշինկթըն Յոյս ունի

Շարունակուած էջ 1-էն

ցը: Ան նաեւ նշած է, որ ատրպէյճանցիներու եւ հայերու միջեւ կապերու հաստատման ջանքերը նոյնպէս կրնան նպաստել ամուր կարգաւորման համար, երկու կողմերու քաղաքացիներուն օգնելով պատրաստուիլ խաղաղութեան: «Որպէս ԵԱՀԿ համանախագահ երկիր ԱՄՆ հաւատարիմ է այդ գործընթացին՝ ամենաբարձր մակարդակով»,- աւելցուցած է Պրենթ Հարթլի:

# ԱՐՍԷՆ ՆՇԱՆԵԱՆ. «ՀԱՅՐՍ ՏԵՂԻ ՊԻՏԻ ՉՏԱՅ. ԵՍ ԱՅԴ ՄԷԿԸ ԱՆՈՐ ԱՉՔԵՐՈՒՆ ՄԷՋ ՏԵՍԱՅ»



***ՍԱԳՕ ԱՐեԱՆ***

*Արսէն Նշանեան իր հօր քաղբանտարկեալ Սեւան Նշանեանին հանդիպած է Հինգշաբթի 19 Յունիսին Իզմիրի «Ալիաղա» բանտին մէջ:Ըստ Արսէնին այս հանդիպումները կը կայանան շաբաթը անգամ մը՝ ամէն Հինգշաբթի օր: Սեւան Նշանեանի դէմ բանտարկութեան պատիժի արձակումէն ի վեր «Ալիաղայի բանտը արդէն երրորդ բանտն է, ուր անարդար ու անհիմն պատճառներով արգելափակուած Նշանեանը կը բոլորէ իր պատիժի օրերը: Այսօր Նշանեանի դէմ դատական նոր գործեր կը յարուցուին ու մտավախութիւններ կան «որ անոր տաս տարուան բանտարկութեան պատժագիր հրապարակուի: Այս եւ տարբեր թեմաներու մասին զրուցեցի Արսէն Նշանեանին հետ, որ ներկայիս կը գտնուի Պոլիս: Յիշեցնեմ, որ Արսէն Մեծն Բրիտանիոյ St. Andrews համալսարանի ուսանող է:*

Ի՞նչ պայմաններու տակ կը գտնուի Սեւան Նշանեանը այսօր:

*Սկսելու համար ըսեմ, որ նախնական շրջանին հայրս կը գտնուէր «Թորպալը»ի բանտին մէջ եւ այդ բանտի ռէժիմը բաւական հեշտ էր: Ան չըլլալով քրէական մեղադրանքներով բանտարկուած մէկը իրաւունք ունէր ամիսը մէյ մը բանտէն դուրս գալ: Այնտեղ նաեւ ընթերցելու եւ համակարգիչ օգտագործելու հնարաւորութիւն ունէր: Մեր հետ կապն ալ շատ բնական հունով կը պահպանուէր:*

Իսկ Հիմա՞

*Հիմա անհամեմատ դժուար են պայմանները:Հայրս ոչ ոքի հետ կապ պահելու կամ հաղորդակցելու իրաւունք ունի: Միակ մարդը որուն հետ կը խօսի իր բանտապահն է:*

Ըսիր, որ այցելած ես իրեն կրնաս պատմել ձեր վերջին հանդիպման մանրամասնութիւններուն մասին:

*Այո՛ ամէն շաբթուան Հինգշաբթի օրը Իզմիր կ'երթանք իր հետ հանդիպելու: Հայրս ծանր պայմաններու տակ է:Ապահովական խիստ կարգադրութիւններ կան եւ կարելի չէ մօտենալ իրեն, ան բանտի ճաղերու ետին է: Հանդիպման համար մեզի տրուած ժամանակահատուածն ալ շատ քիչ է:*

Քու կարծիքովդ ինչո՞ւ այսքան ծանր են պայմանները:

*Իմ կարծիքով իշխանութիւնները (Թուրքիոյ-Ս.Ա.) ծանր պայմաններ դրած են հօրս վրայ պարզապէս հոգեբանական ճնշումներ բանեցնելու նպատակով: Այս «Հոգեբանական չարչարանքները եւ ճնշումները նոր չեն եւ արդէն վեց ամիսներէ ի վեր հայրս ծանր վիճակներու մէջ է»:*

Ինչպէ՞ս գտար զինք: Ի՞նչ վիճակի մէջ է ան:

*Առաջին ամիսները շատ ծանր եղան: Ան ամբողջութեամբ ճնշուած կը զգար ինքզինք:*

Նոյնն է՞ հիմա

*Ո՛չ. եթէ առաջին ամիսները մինակ ու անզօր կը զգար ապա այսօր իրականութիւնը տարբեր է:*

Ինչո՞վ կը զբաղի բանտին մէջ

*Գաղտնիք մը բացայայտելով ըսեմ, որ երէկուան մեր հանդիպման առաջին անգամն ըլլալով հայրս ինձմէ կարգ մը գիրքեր խնդրեց:*

Ի՞նչ գիրքեր

*Օսմանեան կայսրութեան եւ յատկապէս Օսմաներէն բառակապակցութիւններու մասին գիրքեր: Կարծես թէ այդ ուղղութեամբ որոշ աշխատութիւններ ընելու կը պատրաստուի: Բայց սխալ պիտի ըլլար եթէ այդ մասին կանխագուշակումներ ընէի:*

Արսէն, հօրդ հետ իմ ունեցած հարցազրոյցին մէջ ան մտավախութիւններ յայտնած էր, որ մոռացութեան կրնայ մատնուիլ ու յատկապէս Հայաստանի մէջ: Ի՞նչ ունիս ըսելիք այս առումով:

*Կայ այդ խնդիրը: Այսօր օրինակ Թուրքիոյ մէջ հայկական ոչ բոլոր թերթերը կը գրեն իր մասին: Ու մոռացութիւնը որուն ակնարկած է ոչ թէ իր անձին կը վերաբերի այլ իր կատարած գործին:*

Ի՞նչ պէտք է ընել, ի՞նչ կ'ակնկալէք:

*Կը կարծեմ, որ ներկայ հանգրուանին մեծագոյն աշխատանքը որ կրնանք ընել բոլորս իր գործը աշխարհին ծանօթացնելն է: Այդ աշխատանքը պէտք է տանին նաեւ Թուրքիայէն դուրս գտնուող հայերը: Օրինակ ստեղծուած է «Սեւան Նշանեանի Պաշտպանութեան Կոմիտէ» եւ կը յուսամ, որ Սեւանի ընկերներն ու մտերիմները կը շարունակեն հանրային կարծիք ձեւաւորել իր դատին շուրջ:*

*Կը կարծեմ, որ հարկ է նամակագրութեան արշաւներ սկսիլ ուղղուած եւ մարդկային իրաւանց հարցերով զբաղող գրողներու, մտաւորականներու, լրագրողներու եւ առհասարակ իր դատին հանդէպ հետաքրքրութիւն ունեցող մարդոց մօտ արթնութիւն մը յառաջ բերելու համար: Կարելի է զանոնք նոյնպէս հրաւիրել Թուրքիա եւ սեմինարներ կազմակերպել կամ այդ ձեւի հաւաքներ ընել մինչեւ, որ հօրս արդար դատին մասին բոլորը իմանան:*

Իսկ ի՞նչ հունի մէջ են »Շիրինճէ«ի մէջ գտնուող ձեր զբօսաշրջիկային համալիր-պանդոկին աշխատանքները:

*Կը փորձենք մեր կարելին ընել հօրս սկսած գործը բնական հունով շարունակելու համար ու ցարդ ամէն ինչ բնական հունի մէջ է: Ճիշդ է, որ ազդուեցանք ստեղծուած իրավիճակէն բայց եւ այնպէս գործը կը շարունակուի:*

Երէկ Սեւանին հետ հանդիպեցար. ի՞նչ էր անոր պատգամը:

*Հայրս տեղի պիտի չտայ այս ճնշումներուն դիմաց այդ էր իր վերջին խօսքը:Ես այդ մէկը զգացի նայելով անոր աչքերուն մէջ: Ան իր մտաւորական աշխատանքները պիտի շարունակէ ամէն գնով ու այս մասին ան յայտարարեց նոյնիսկ իր բանտ մտնելու առաջին օրը: Ուրեմն պայքարը պիտի շարունակուի: Հօրս պայքարը մտաւորական պայքար է: Բառի եւ գաղափարի պայքար է: Կը հաւատամ, որ ամէնէն կարեւորը իր արտադրած գործին հանդէպ ըլլալիք յարգանքն ու յարգանքէն անդին ուշադրութիւնն է: Հայրս վճռած է պայքարիլ Թուրքիոյ մէջ առկայ սխալներուն դէմ: Սխալներ որ հարիւրաւոր տարիններէ ի վեր կը քնանան այս երկրին մէջ: Գիտեմ որ դժուար է հաւատալ եւ միաժամանակ նուիրուիլ նման պայքարի մը, որովհետեւ այս ճամբան լեցուն է վտանգներով: Ու կարիք չեմ զգար այստեղ այդ վտանգներուն մասին խօսիլ:*

Յանուն ինչի՞ կը պայքարէր Սեւանը

*Անոր պայքարը մէկ հատուածի մը համար եղած պայքար չէր: Ան կը պայքարէր Թուրքիոյ մէջ եղած բազմաթիւ խնդիրներու, անարդարութիւններու, ճնշող եւ անիրաւ գաղափարախօսութիւններու դէմ:*

Վերջին ըսելիք մը ունի՞ք

*Շատ պիտի խնդրեմ, որ Հայաստանի եւ Սփիւռքի հայկական լրատուամիջոցները լայն տեղ տան Սեւան Նշանեանի խնդրին ու աւելի մօտէն հետեւին անոր արդար դատին:*


Ընկերային Խրախճանք

եւ

Ազգային Երգերու երեկոյ

Նուիրուած քնարապի Հայութեան

Կազմակերպութեամբ՝

Փարամազ Մասնաճիւղի

երեկոն կը խանդավառէ

Արնօ եւ իր նուագախումբը

Հայկական եւ Միջին արեւելեան ճաշեր

տեղի կ՝ունենայ 19 Յուլիս, 2014-ին

ժամը 8:00-էն սկսեալ

Հ.Կ.Բ.Մ.-ի Կարօ Սօղանալեան սրահէն ներս

մուտքի նուէր՝ 35.00

# ԹԱՐՄ ՀՈՂԱԿՈՅՏԵՐՈՒՆ ԱՌՋԵՒ
# 100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ ԶՈՒԻՑԵՐԻՈՅ ՄԱՄՈՒԼՆ ՈՒ ՀՆՉԱԿԵԱՆ ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐԸ

*ԴՈԿՏ. ԱԲԷԼ ՔՀՆՑ. ՄԱՆՈՒԿԵԱՆ*
*(Շարունակուած նախորդ թիւէն)*

### ՀՆՉԱԿԵԱՆ ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐԸ ԶՈՒԻՑԵՐԻՈՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ ՄԷՋ «ԼԱ ՍԱՆԹԻՆԷԼ» ԹԵՐԹԸ

Քիչ մը վերը արդէն հպանցիկ մը նշեցինք, որ Հնչակեան Քսան Կախաղաններու վերաբերեալ առաջին տեղեկութիւնը կը հաղորդուի արեւմտեան Զուիցերիոյ ընկերվարականներու «Լա Սանթինէլ» թերթի 6 Օգոստոս 1915ի թիւին մէջ: Տեղեկագրութիւնը կը սկսի հաղորդելով ուղղակի Քսան Կախաղաններու գործը, որ Կ. Պոլսոյ մէջ երիտթրքական կառավարութեան կողմէ հրապարակաւ կախաղան բարձրացած են Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան անդամներէն քսան անմեղ հայեր, ամբաստանուելով ազատ Հայաստան մը հիմնելու ցանկութեան մէջ[57] :

Թերթը միաժամանակ կը տեղեկացնէ, թէ մինչ այդ որոշակի թիւ մը հայ յեղափոխական այլ կուսակցութիւններէն, մտաւորականներէն եւ ազգի երեւելիներէն ձերբակալուելով աքսորուած են Թուրքիոյ խորքերը՝ դէպի Գոնիա, ուր բոլորը սպաննուած կամ «անձնասպան» եղած են: Հետաքրքրական է, որ տեղեկագրութիւնը «suicides» (անձնասպան ըլլալ) բայը չակերտներու մէջ առած է, ընդգծելու համար այս առնչութեամբ թրքական սուտակասպաս քարոզչութիւնը:


N° 180. — 31e Année — Le numéro 5 cent. — Vendredi 6 Août 1915

La Sentinelle

JOURNAL D'INFORMATION ET D'ANNONCES

ORGANE DES SOCIALISTES DU JURA

Ce que disait Jaurès

Déclaration

Echos de la guerre

La terreur en Turquie

*«Լա Սանթինէլ», 6 Օգոստոս 1915*
*Ահաբեկչութիւն Թուրքիոյ Մէջ,*
*Քսան Հայեր Կախաղան Բարձրացած են Կ. Պոլսոյ Մէջ,*
*Հայաստանի մէջ ջարդուած են Հազարաւորներ*

Եւ այս բոլորը, կը շարունակէ թերթը, քրիստոնեաներու հին ջարդարարները, Գերմանիոյ Վիլհելմ Բ. Կայսեր հովանաւորութեան տակ, ինքզինքնին ամբողջապէս ազատ եւ անպատասխանատու կը զգան կրկնելու համար 1894-1896 թուականներու կոտորածները: Միայն Պիթլիսի շրջանին մէջ, բոլոր այրերը ջարդելէ ետք, Թուրքերը 9.000 կանայք, երեխաներ եւ ծերեր հաւաքելով տարած են Տիգրիսի ափը, ուր զանոնք գնդակահարած եւ ապա դիակները նետած են գետը:

Կիլիկիոյ հայութեան դէմ պատահած կոտորածներուն անդրադառնալով, «Լա Սանթինէլ» անգամ մը եւս կը հաստատէ արդէն Յուլիսի կիսուն հաղորդած տեղեկութիւնը, որուն համաձայն 40.000 հայեր սպաննուած են, բնակչութիւնը ունեցուածքէ կողոպտուած եւ բոկոտն աքսորուած է դէպի անապատ՝ հոն անջրդի եւ սովամահ դառնալու համար:

Սակայն հակառակ այս սահմռկեցուցիչ փաստերուն, «Լա Սանթինէլ» լիայոյս է, որ ի վերջոյ արդարութեան ժամը հնչած է եւ Հայաստան կը գտնուի իր ազատագրութեան ճամբուն վրայ: Վանի եւ շրջակայից հայութիւնը, բոլոր հայ յեղափոխական կուսակցութեանց զօրակցութեամբ ու ղեկավարութեամբ, զէնք բարձրացնելով կրցած է ետ մղել իր կեղեքիչները եւ, հինգ դարերու ստորնացուցիչ ստրկութենէ վերջ, հայոց դրօշը վերստին սկսած է ծածանիլ Հայաստանի ամրոցին վրայ:

Բնականաբար, որքան գնահատելի է թերթին խրախուսիչ լաւատեսութիւնը, դժբախտաբար, սակայն, կը գտնուի իրական ըլլալէ շատ հեռու: Թրքական կանոնաւոր բանակներուն դէմ եւ անհաւասար մարտերու մէջ հետզհետէ պիտի նահանջէր Վանի հայութիւնն ալ, ոմանք ենթարկուելով ցեղասպանուող իրենց եղբայրներու եւ քոյրերու ճակատագրին, իսկ ուրիշներ իրենց ծննդավայրէն հեռանալով, դժուարին պայմաններու մէջ ապաստանարան պիտի գտնէին Արեւելեան Հայաստանի սահմաններէն ներս:

Ինքնաբերաբար, այստեղ մեր միտքը կը խուժէ անլուծելի հարցումներու տարափ մը. եթէ չըլլային մեր պատմութեան մէջ Վասակները, արդեօ՞ք մեր ժողովուրդը պիտի ունենար աւելի բարեբաստիկ ճակատագիր մը: Արդեօ՞ք մեր կեանքին փոթորկայոյզ ընթացքը պիտի առնէր նուազ դժխեմ ու արիւնալի ուղղութիւն մը: Այս պարագային, եթէ չըլլար Արթիւր Եասեան վատանուն հայը, եւ եթէ երբեք թուրք ոստիկանութեան չմատնէր ան երիտթուրք պարագլուխներուն՝ ցեղասպան Թալէաթներուն եւ Էնվէրներուն վերացնելու Կոստանցայի ժողովին ծրագիրը, արդեօ՞ք կարելի պիտի ըլլար 1914ին կանխարգիլել չարութեան ժահր ստինքէն հայութեան դէմ դիեցուած ոճիրին իրականացումը: Հետեւաբար՝ պիտի կարենայի՞նք պահպանել մեր դարաւոր հայրենիքը՝ Արեւմտեան Հայաստանն ու չքնաղ Կիլիկիան:

Հարցադրումները կը մնան ենթադրութիւններու սահմանին մէջ, երազները կը փշրուին բախելով կատարուած դառն իրականութեան ժայռին, բայց վառ յոյսը մեր չի մարիր երբեք, արդարութեան համար պայքարը մեր մէջ պիտի չնահանջէ երբեք, ու պահանջատիրութիւնը պիտի մնայ մնայուն առանցքը հայու գոյերթին:

### «ԴԱՀԻՃԸ Կ'ԻՇԽԷ» ԵՒ «ԹԱՐՄ ՀՈՂԱԿՈՅՏԵՐՈՒՆ ԱՌՋԵՒ» ԽՈՐԱԳՐԵՐՈՎ ՅՕԴՈՒԱԾՆԵՐԸ՝ «ՊԵՐՆԵՐ ԹԱԿՎԱԽԹ» ԵՒ «ՖՕԼՔՍՐԵԽԹ» ԹԵՐԹԵՐՈՒՆ ՄԷՋ

Հնչակեան Քսան Կախաղաններու վերաբերեալ հրապարակած «Լա Սանթինէլ»ի տեղեկագրութեան յաջորդ օրն իսկ, 7 Օգոստոս 1915ին, «Պերներ Թակվախթ» ընդարձակ յօդուածով [58] մը, որ «Der Henker Herrscht - Դահիճը Կ'իշխէ» խորագիրը կը կրէ, հանգամանօրէն կ'անդրադառնայ Հնչակեան Քսան Կախաղաններուն: Նոյնը առաջնորդող յօդուածի [59] մը հանգամանքով, բայց աւելի ամբողջական տարբերակ մը կը տպէ «Ֆօլքսրեխթ», իր 13 Օգոստոս 1915 թիւին մէջ: Սակայն Հնչակեան Քսան Կախաղաններու վերաբերեալ այս լայն անդրադարձին «Ֆօլքսրեխթ» կու տայ ուրիշ, աւելի յուզիչ՝ «Vor frischen Grabern. Zur Hinrichtung zwanzig trkischer [60] Genossen-Թարմ Հողակոյտերուն Առջեւ-Քսան Թրքահպատակ Ընկերներու Սպանութեան» խորագիրը:

Այս զոյգ յօդուածները համեմատելով իրարու հետ կը հաստատենք, որ առաջինը, այսինքն՝ «Պերներ Թակվախթ»ի տպագրած յօդուածը վերախմբագրուած եւ կրճատուած տարբերակ մըն է խմբագրութեան կողմէ, մինչդեռ «Ֆօլքսրեխթ»ինը, հակառակ նախորդէն շաբաթ մը աւելի ուշ տպուած ըլլալուն, բնագրին մէջ պահպանած է ամբողջ հատուածներ, որոնք, ինչպէս ըսինք, կը պակսին կամ կրճատուած են առաջինին մէջ:

Վերոյիշեալ «Պերներ Թակվախթ» թերթին մէջ լոյս տեսած յօդուածի հեղինակն է «Arscheff Suracow, der Abgeordnete der 2. Reichsduma - Բ. Պետական Դումայի Պատգամաւոր՝ Արշեֆֆ Սուրագով»ը, իսկ «Ֆօլքսրեխթ»ինը կը կրէ «Surabow, Abgeordneter der II Reichsduma - Բ. Պետական Դումայի Պատգամաւոր՝ Սուրաբով» ստորագրութիւնը: Հեղինակի ինքնութեան վերաբերեալ կատարած մեր հետազօտութիւնները պարզեցին, որ երկու պարագաներուն ալ խօսքը միեւնոյն անձի մասին է, եւ ուրիշ կերպ չէր ալ կրնար ըլլալ, քանի վերնագրերու տարբերութենէն բացի, յօդուածը իր հիմնական կառոյցին մէջ նոյնն է [61]: Հետեւաբար, Արշեֆֆ Սուրագով կամ Սուրաբով ուրիշ անձ մը չէ, եթէ ոչ մին մեր յեղափոխական պատմութեան մէջ յայտնի գործիչներէն՝ Ռուսաստանի Բ. Դումայի Թիֆլիսի պատգամաւոր, Մենշեւիկ (փոքրամասնական) կուսակցութեան անդամ՝ Արշակ Գերասիմի Զուրաբովը (Զուրաբեան կամ Զոհրաբեան):

Ո՞վ է վերոյիշեալ յօդուածին հեղինակը, եւ ի՞նչ եղած է իր կապը Հնչակեան Քսան Կախաղաններուն հետ, կ'արժէ համառօտակի անդրադառնալ, իր գրութիւնը վերլուծելէ կամ զայն ներկայացնելէ առաջ:

### ՅՕԴՈՒԱԾԻ ՀԵՂԻՆԱԿԻՆ ԻՆՔՆՈՒԹԻՒՆԸ

Արշակ Գերասիմի Զուրաբով (Զուրաբեան կամ Զոհրաբեան) ծնած է Թիֆլիս 1873ին, մահացած է Երեւան, հուսկ թաղուած է Թիֆլիս, 1920 թուականին: Ծագումով ազնուական ընտանիքէ ըլլալով հանդերձ, 1890ական թուականներուն սկիզբը կը ներգրաւուի յեղափոխական շարժման մէջ ու կը դառնայ Ռուսաստանի, մասնաւորաբար սակայն Անդրկովկասի յեղափոխական ականաւոր գործիչներէն մին: Բարձրագոյն ուսումը կը ստանայ Խարքովի ճարտարագիտական, ապա Փեթերզպուրկի ինստիտուտներուն մէջ, բայց դուրս կը մնայ թէ՛ առաջին եւ թէ՛ երկրորդ ուսումնական հաստատութիւններէն: Կը մասնագիտա-


*Արշակ Գերասիմի Զուրաբով*
*(Զուրաբեան կամ Զոհրաբեան)*
*1873–1920*

*Շար.ը էջ 8*

# 100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ ԶՈՒԻՑԵՐԻՈՅ ՄԱՄՈՒԼՆ ՈՒ ՀՆՉԱԿԵԱՆ ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐԸ

*Շարունակուած էջ 7–էն*

*նայ լրագրութեան ասպարէզին մէջ [62]: 1899ի սկիզբը յեղափոխական գործունէութիւն ծաւալելու մեղադրանքով ան կ՚աքսորուի Փեթերպուրկէն, բայց գալով կը հաստատուի Թիֆլիս, ուր կապեր կը հաստատէ Ստ. Շահումեանի, Բ. Կնունեանցի, ինչպէս նաեւ այլ յեղափոխական գործիչներու հետ, ու համագործակցելով անոնց հետ, 1902ին կը հիմնէ «Հայ Սոցիալ Դեմոկրատներու Միութիւն»ը եւ անոր տպագիր «Պրոլետարիատ» պաշտօնաթերթը[63] : Արշակ Զուրաբով կը դառնայ անդամ Ռուսաստանի Սոցիալ Դեմոկրատական Բանուորական Կուսակցութեան (ՌՍԴԲԿ), եւ բոլշեւիկեան խմբաւորումին կողմէ կը ներկայանայ որպէս պատգամաւոր 1903 թուականին գումարուած ՌՍԴԲԿ երկրորդ համագումարին: Դեռեւս սոյն համագումարի կայացումէն առաջ, ան անձամբ կը ծանօթանայ Վ. Ի. Լենինին հետ ու կը կատարէ անոր շարք մը յանձնարարականները [64]: Ապօրինի գրականութիւն ունենալու պատճառով, անոր կ՚արգիլուի բնակութիւն հաստատել Կովկասի մէջ, կ՚արտաքսուի Աստրախան մինչեւ 1904 թուականը: Նոյն տարին ան կը գործուղղուի Թաշքենթ, ուր կը խմբագրէ թերթերը: 1905ին կրկին կը կալանաւորուի: Թիֆլիս վերադառնալէ ետք, հայերէն լեզուով կը հրատարակէ սոցիալ-դեմոկրատներու «Հոսանք» թերթը, նաեւ կը թղթակցի «Տարազ» ամսագրին: 1906 թուականէն սկսեալ կը յարի Մենշեւիկներուն (փոքրամասնականներ), եւ կը դառնայ Ռուսական Բ. Պետական Դումայի անդամ[65]: 1917 թուականի Փետրուարեան Յեղափոխութենէն ետք, Ապրիլին, Արշակ Զուրաբով կը վերադառնայ Ռուսաստան եւ կը մտնէ բանուորի եւ զինուորի պատգամաւորներու Փեթրոկրատի սովետի կազմին մէջ: 1917 թուականի Հոկտեմբերեան Յեղափոխութենէն ետք կ՚ընտրուի Սահմանադիր Ժողովի պատգամաւոր, իսկ անոր ցրումէն վերջ՝ 1918ի սկիզբը կը վերադառնայ Թիֆլիս: Ան կը համարուի հայ սոցիալդեմոկրատ ինտերնացիոնալիստներու պատկառելի ղեկավարներէն մին:*

-Արարողութեան աւարտին մարդիկ հագնելով իրենց կօշիկները անցնում էին դէպի մեծ սրահը հիւրասիրութեան ներկայ գտնուելու: Այս կողմ այն կողմ կօշիկներս եմ փնտռում, չկան ու չկան, սպասեցի մինչեւ պահոցները դատարկուեցին, մի քանի հին եւ մաշուած կօշիկներ էին մնացել, իմոնքը մի պուտ իւղ դարձած անհետացել էին: Չէի կողմնորոշւում ինչ անել, եղածը զեկուցեցի մեր հոգեւորական ղեկավարին, նա առաջարկեց կօշիկներից մէկն ու մէկը հագնել մինչեւ հետագայ որոշում: Նա սրահում հացկերոյթի ընթացքում խայտառակեց կօշիկները անյայտ գողացողին, անգամներ անունս հնչեցրեց գովաբանելով հայերի

Շար.ը էջ 18

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԿՐԿՆՈՒԱԾ
## Կ.ՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՆԵՐՔԻՆ ՏԱԳՆԱՊՆԵՐԷՆ (1948 - 1950)

*ԴՈԿՏ. ԶԱՒԷՆ Ա. ՔՀՆՑ. ԱՐՋՈՒՄԱՆԵԱՆ*

### Պատրիարքութեան Զգտեալ Վիճակը 1948 թուին

Կ. Պոլսոյ Հայոց Մեսրոպ Պատրիարք Նարոյեան Քեմալական Թուրք Հանրապետութեան առաջին պատրիարքը եղաւ որ ճնշիչ պայմաններու տակ 1927-էն մինչեւ 1944 վարեց իր ծանր պարտականութիւնը խղճի մտօք եւ վախճանեցաւ պաշտօնի վրայ 1944 թուականին: Աթոռին Տեղապահ ընտրուեցաւ Գէորգ Արքեպս. Ասլանեան եւ չորս տարիներ ետք, 1948 թուի կէսերուն, Հայոց Պատրիարքութեան Իսթանպուլի հոգեւորականներէն խումբ մը խռովութիւն ստեղծեցին մեղադրելով Տեղապահը պատրիարքական ընտրութիւնը ձգձգած ըլլալուն համար: Անոնք պահանջեցին իրմէ ընտրութեան գործադրութիւնը քանի որ չորս տարիներ թափուր կը մնար Աթոռը եւ Տեղապահն ալ կը սպասէր Ամենայն Հայոց Կաթողիկոսի հաւանութեան:

Կաթողիկոսական ընտրութենէն եւ հայրապետական օծումէն ետք, որուն մասնակցած էր նաեւ Գէորգ Արքեպս. Ասլանեան, երբ Տ. Տ. Գէորգ Զ. Զորեքճեան Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուեցաւ 1945 թուին, կասկածներ տարածուիլ սկսան Իսթանպուլի մէջ թէ Տեղապահը վերադարձին նորընտիր Կաթողիկոսէն չէր կրցած հաստատ որոշում մը առնել, եւ երեք տարիներ եւս անցած ըլլալով տակաւին կը յապաղէր պատրիարքական ընտրութիւնը: Ասլանեան Տեղապահ ընթացք չէր տար եղած պահանջքին պատասխանելով որ միայն Ամենայն Հայոց Կաթողիկոսէն եկած ցուցմունքով կը շարժէր ընտրութեան խնդրին մէջ:

Իսթանպուլի մէջ գտնուող եւ գործող 53 եկեղեցականներէն 38-ը խռովարարներու խումբին միացած էին, եւ այլեւս անխոհեմ կը թուէր ընտրութեան յետաձգումը որ իրականին մէջ լուրջ պատճառ մըն ալ չունէր: Անոնք կրկին Տեղապահին դիմեցին նոյն պահանջքով, եւ երբ մերժուեցան, ինքզինքնին մեծամասնութիւն նկատելով պատրիարքական ընտրութիւն կատարել որոշեցին: Տեղապահի կամքին հակառակ երեք հոգինոց պատուիրակութիւն մը Անգարա մեկնեցաւ Պատրիարքի ընտրութեան համար պետական արտօնութիւն ստանալու:

### Հոգեւորականներ Կախակայուած Գերեգոյն Հոգեւոր Խորհուրդի Դիրքը

Կացութեան լրջութիւնը ստիպեց Տեղապահ Ասլանեան Սրբազան խռովարար եկեղեցականներուն պարագլուխը եղող հինգը կախակայելու, եւ պարագան տեղեկացնելով Ամենայն Հայոց Հայրապետին, խնդրեց պատիժին հաստատումը: Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը հաստատեց կախակայումը, «քանի որ խռովարարներ ինքնագլուխ դիմել էին թուրքական իշխանութիւններու օգնութեանը, որը հակասում է Հայոց Եկեղեցու բոլոր օրէնքներին»: Կախակայեալներն էին Հմայեակ Ծ. Վրդ. Պախթիարեան, Զարմայր Ծ. Վրդ. Կէօզիւրեան, Թովմա Ա. քհնյ. Շիկահեր, Աբրահամ Ա. քհնյ. Էպէեան, եւ Սերովբէ քհնյ. Պուրմայեան: Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի որոշումը եղած է հաստատել Տեղապահին կախակայման պատիժը՝ «ցնոր տնօրինութիւն»:

Կախակայեալներ աւելի առաջ երթալով իրենց համախոհներուն հետ միասին ժողով գումարեցին «եւ Գէորգ արքեպիսկոպոս Ասլանեանին հեռացրին Կ. Պոլսի պատրիարքի տեղապահի պաշտօնից», առժամեայ Տեղապահ նշանակելով Պախթիարեան վարդապետը: Անոնց յաջորդ ծանրակշիռ քայլը եղաւ գրոհել Պատրիարքարանի շէնքը ու զայն գրաւել փորձել, որուն հետեւանքով ոստիկանութիւնը միջամտած է: Զայրացած Մայր Աթոռի բռնած դիրքէն, այս անգամ հարցը քաղաքական բեմի վրայ հանած են անոնք իրենց յաջողութեան յոյսը «դնելով Աստուծոյ եւ Թուրք պետութեան ժողովրդական եւ կրօնական սկզբունքներուն վրայ», ինչպէս գրեր էին այդ օրերուն:

### Պետական Միջամտութիւն

Թրքական պետութիւնը անհարկի միջամտեց ընտրական գործին եւ առանց Հայ Եկեղեցւոյ վերին իշխանութեան հաւանութեան, արտօնեց 1949 Յուլիս 27-ին Կ.Պոլսոյ Պատրիարքի ընտրութիւնը կատարել՝ առանց Տեղապահ Գէորգ Արքեպս. Ասլանեանի հաճութեան, այլ միայն հակառակորդներու պահանջքին վրայ ապօրէն գումարուելիք ժողովի միջոցաւ եւ Ազգային Սահմանադրութեան հակառակ: Թրքական միջամտութեան դէմ Գէորգ Զ. Հայրապետ Մայր Աթոռէն խստիւ պատրիարքարան հեռագրեց շեշտելով որ ինք անձամբ պիտի քննէր ընտրութեան հարցը, եւ թէ մինչ այդ պատրիարքի ընտրութիւն կարելի չէր ընել:

### Գարեգին Ա. Կիլիկիոյ Կաթողիկոսին Միջնորդութիւնը

Իսկոյն Ամենայն Հայոց Կաթողիկոսը հարցը յանձնեց Կիլիկիոյ Տ. Տ. Գարեգին Ա. Յովսէփեանց Կաթողիկոսի քննութեան որմէ ետք պիտի տար իր վերջնական վճիռը: Գարեգին Ա. Հայրապետի պահանջքով լուսաբանիչ տեղեկագիրներով Անթիլիաս ժամանեցին Թորոս Ազատեան՝ յանուն Տեղապահ Ասլանեան Սրբազանի, եւ երկու կախակայեալ հոգեւորական-ներ: Անկախաբար անոնց կ՛ընկերակցէին իրաւաբան Ստեփան Պարոնեան եւ Տոքթ. Հրանդ Հայրապետեան: Գարեգին Կաթողիկոս, ի ներկայութեան Կաթողիկոսական Փոխանորդ Խադ Արքեպս. Աջապահեանի եւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Կեդր. Վարչութեան ատենապետ Տաճատ Սրապեանի կատարած է հարցին մանրամասն քննութիւնը եւ տեղեկագրած Ամենայն Հայոց Տ. Տ. Գէորգ Զ. Կաթողիկոսին առ ի վճռահատում:

### Հարցը Կնճռոտած եւ Մտահոգիչ

Սուրբ Էջմիածին յղուած տեղեկագիրներուն հիման վրայ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ստիպուած կ՛ըլլայ կրկնել կախակայեալներուն պատիժը եւ նոյնիսկ երեք հոգեւորականներ կարգալոյծ կը հռչակէ՝ Հմայեակ Պախթիարեանը,

Շար.ը էջ 18

## ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓԱՌԱՏՕՆԸ

*7րդ տարեկան մշակութային փառատօնը՝ կազմակերպութեամբ Փասատինայի Համագաղութային Մարմնին, տեղի պիտի ունենայ*

*Կիրակի, 20 Յուլիս 2014ին, ժամը 12:00-7:00 Փասատինայի Յաղթանակի Զբօսայգիին (Victory Park) մէջ։ Վայրի հասցէն է 2575 Paloma Street at the corner of Altadena Drive:*

*Ընտանեկան այս դաշտագնացութեան մուտքը ազատ է, ինչպէս նաեւ ձրի է ինքնաշարժներու կանգառը (parking): Իսկ ամբողջ օրը պիտի հնչէ հայկական երաժշտութիւնն ու երգը՝ կատարողութեամբ յայտնի եւ սիրուած երգիչներու: Մէջ ընդ մէջ պարախումբեր պիտի ունենան ելոյթներ, իսկ երեխաներու համար պիտի ըլլան յատուկ խաղեր, ինչպէս նաեւ կենդանաբնական պարտէզ:*

*Այս տարի կը զուգադիպի Փասատինա քաղաքին մէջ՝ առաջին հայուն հաստատման 125-ամեակին: Արդարեւ Մովսէս Բաշկեան 1889ին հաստատուեցաւ Փասատինա եւ հիմնեց գորգավաճառի իր անձնական վաճառատունը, Քոլօրատօ փողոցին վրայ: Անոր աղջկան Թոռնուհին տակաւին կը բնակի հոս եւ հաւանաբար անձամբ ներկայ պիտի գտնուի այս դաշտագնացութեան:*

*Այս առթիւ՝ Դոկտ. Յովհաննէս Ահմարանեան հրատարակած է Փասատինայի հայութեան պատմութեան առաջին հատորը (1889-1959) որ պիտի ներկայացուի հանրութեան եւ ան անձամբ ներկայ գտնուելով պիտի մակագրէ ձեր օրինակները:*

*Անշուշտ վաճառքի պիտի դրուին վիճակահանութեան տոմսեր եւ բախտաւոր անձեր պիտի արժանանան շատ արժէքաւոր նուէրներու: Իսկ ամբողջ օրը դուք պիտի կրնաք համտեսել հայկական համադամ ճաշերն ու անուշեղէնները, սուրճի կամ զովացուցիչի ընկերակցութեամբ:*

*Եթէ կ'ուզէք վաճառքի համար կրպակ (booth) ունենալ՝ կը խնդրուի անյապաղ հեռաձայնել հետեւեալ թիւին (626) 399-1799:*




## ԹԱՄԱՐ ԲԱԲԻՐԵԱՆ-ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ EMMY-Ի ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ




*Ուրախութեամբ կ'իմանանք թէ մեր անմիջական համակիր շրջանակի անդամուհիներէն Թամար Բաբիրեան-Խաչատուրեան վերջերս արժանացած է EMMY-ի մրցանակին: Գեղարուեստական յարդարումներու համար իր կատարած նորարարութիւնները արժանացած են դատական կազմի բարձր գնահատականին: Սոյն մրցանակաբաշխութիւնը տեղի ունեցած է Լոս Անճելոսի Պօնավանթիւր հիւրանոցին մէջ:*

## 100,000 ՏՈԼԱՐ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԵՑԱՒ ՎԱՐԴԵՐՈՒ ՓԱՌԱՏՕՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱՂԿԱՍԱՅԼԻՆ ՀԱՄԱՐ

*Շարունակուածէջ1-էն*

*լիք Փասատինայի, Գալիֆորնիոյ եւ համայն աշխարհի հայութեան, որ հարիւր քսան հինգ տարի ետք, ահաւասիկ, յառաջիկայ Յունուար 1, 2015-ին, պիտի իրականութիւն դառնայ այս հնամեայ երազը: Հայութիւնը պիտի ունենայ իր ծաղկասայլը որուն յատակագիծին ու գծապատկերին հանդիսութիւնը տեղի ունեցաւ Շաբաթ, Յունիս 21-ին, ազնուափայլ Տիկին Գորրի Հորկանի ապարանքի պարտէզ-ներուն մէջ:*

*Մուտքին, արդէն շատ բան զգացին՝ 200-էն աւելի հրաւիրեալներն ու կանմակերպութեան համակիրները: Զգացին պաշտօնական ու լուրջ մթնոլորտը որ ոգեւորեց ամէն ներկայ եղող հայ եւ ոչ հայ հասարակութիւնը:*

*Այս ծրագրի փուլերէն անցնողը միայն գիտէ, թէ որքան՝ ամէն տեսակի լեռնացած դժուարութիւններ յաղթահարուեցան եւ խոչընդոտներ Հարթուեցան, շնորհիւ Խաչիկ Շահինեանի եւ անոր հետ գործակցող հայասէր, հայրենասէր եւ մշակութասէր խմբակի մը որ իրօք չխնայեց ժամանակ, քրտինք ու դրամ որպէսզի այս ծաղկասայլի միջոցով, աշխարհը որոշ պատկերացում ունենայ մեր ինքնութեան, մշակոյթին ու պատմութեան, եւ ըլլայ մեզի՝ հայերուս համար «Անլուելի Զանգակատունը», ինչպէս որ անդրադարձաւ իր բացման խօսքին մէջ կազմա-կերպութեան Նախագահ՝ Պր. Խաչիկ Շահինեանը: (Կազմակերպչական աշխատանքի եւ կազմակերպութեան անդամներու մասին՝ յառաջիկայ տեղեկագիրներու մէջ):*

*Նախագահի խօսքէն առաջ, ցուցադրուեցան խորհրդանշող հայկական առարկաներն ու խորհրդապատկերները՝ եկեղեցա-կան համար որուն վրա «է» տառը զետեղուած է, հայկական գորգը, Այբուբէնը, անմահութեան նշանը, Կենաց Ծառը, Թուչնագիր սիրա-մարգը, տիւտիւքը, առանց մոռ-նալու հայկական ծիրանը, խաղողն ու նուռը եւ անշուշտ՝ բարի արագիլը:*

*Խաչիկ Շահինեան շնորհակալութիւն յայտնեց բոլոր ներկաներուն եւ ըսաւ թէ «Հայաստան ունի հազարաւոր տարիներու պատմութիւն. մեր մշակոյթը հարուստ է, գունագեղ է եւ կեանքով լեցուն. Եւ այս Ծաղիկ-ներու Տողանցքը մեծ առիթ մը պիտի տայ մեզի որ մեր հարստութիւնները աշխարհի հետ բաժնեկցինք»:*

*Շնորհակալութիւն յայտնելէ յետոյ Ռիչըրտ Շինին (Ծաղկատօնի նախագահ), Ճուլի Ջուին (ԱՄՆ-ի Պատգամաւոր), Քրիս Հոլտընի (Նա-հանգային Ներկայացուցիչ), Ֆիլիփ Սանչեզին (Ոստիկանապետ), Թերի Թորնեզին (Փասատինայի Խորհրդի Անդամ), հրաւիրեց Ճուլի Ջուն եւ Ռիչըրֆ Շին որոնք իրենց խանդավառութիւնը այս ծրագրին, եւ Ծաջիկներու Տողանցքին նախագահը որ կը հսկէ բոլոր ծաղկասայլերու վրայ, յայտարարեց. This is the Float that we want:*

*Խաչիկ Շահինեան, Իրաւաբան Մարք Կիրակոսը բեմ հրաւիրելէ առաջ, յիշեցուց որ «Այս ծաղկասայլը պիտի սփռուի 140 երկիրներու մէջ եւ դիտուի 85 միլիոն մարդոց կողմէ: Մենք պիտի աշխատինք որ ամէն տարի հայկական Ծաղկասայլ մը ունենալ»:*

*Հանրածանօթ ոճրային հարցերու իրաւաբան Մարք Կիրակոս ձեռնհասօրէն վարեց հանգանակութեան կոչը, դրուա-տելով ծաղկասայլին բերելիք նպաստը հայ ինքնութեան, մշակոյթին եւ ճանաչման վեհ նպատակներուն: Մայքին ներդրումը մեծապէս սատարեց նպատակին: հանգանակուեցաւ հարիւր հազար տոլար:*

*Անշուշտ, այս հաւաքուած դրամը պիտի չկարենայ բազմապիսի ծախսերը փակել: Տակաւին կարիքը կայ մեծ գումարներու: Յիշեցնեմ որ այս ծաղկասայլը պիտի հանդիսանայ «շրջուն կոթող մը» եւ միջոց՝ հայը աշխարհին ծանօթացնելու:*

*Առ այդ, կը խնդրուի ձեր աջակցութիւնը: Կարող էք ձեր check-ը ուղարկել՝ American Armenian Rose Float Association-ի:*



# ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻ 2013-14 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՀՈՒՆՁՔԸ

*ԼԻՆՏԱ ԳԱՆՏԻԼԵԱՆ*



Ամէն տարի վարժարանները իրենց ուսումնական շրջանը աւարտող աշակերտներուն բարի երթ կը մաղթեն եւ պատշաճ հանդիսութեամբ անոնց վկայականներ տալով՝ զանոնք կ'անուանեն սոյն տարեշրջանի շրջանաւարտներ:

Այս տարի Հայ Քոյրերու վարժարանը իր զոյգ հանդէսները կատարեց Շաբաթ, Յունիս 14ին, առաւօեան՝ մանկապարտէզի բաժինին համար եւ յետմիջօրէին՝ միջնակարգի:

Միշտ աւելի խանդավառութիւն եւ հետաքրքրութիւն կը ստեղծէ մանկապարտէզի հանդէսը: Մանկապարտէզի աշակերտները, հազիւ կարդալու սկսած՝ մանկական աշխարհին պէտք է հրաժեշտ տան եւ անցնին նախակրթարան: Բայց կարծես այդ իսկ պատճառով, իրենց հրաժեշտը կ'ըլլայ պարերով, երգերով, ցատկռտելով եւ անմոռանալի մթնոլորտ մը ստեղծելով: Ծնողներուն համար ալ մեծ խանդավառութիւն է այս հանդէսը. չէ՞ որ անոնց ալ առաջին փորձառութիւնն է՝ որպէս շրջանաւարտի ծնողներ: Յուզում, ուրախութիւն եւ հպարտութիւն՝ տիրապետող զգացումներն են սրահէն ներս, որ ժամանակէն առաջ լեցուած է անհամբեր ներկաներով. բոլորն ալ պիտի վայելեն իրենց սրտահատորներուն երեք տարիներու ընթացքին ամբարած գիտելիքները, զարգացուցած ունակութիւններն ու ձիրքերը:

Վարժարանիս մանկապարտէզի տնօրէնուհի Սոնիա Գազանճեանի բացման խօսքով ընթացք առած հանդէսը շարունակուեցաւ երկլեզու քայլերգներով, աղօթքներով, երգերով, պարերով եւ գեղեցիկ անակնկալներով, ու վերջապէս՝ տնօրէնուհի քոյր Լուսիայի փակման խօսքով եւ վկայականներու բաշխումով: Սակայն հանդէսը չէր աւարտած. կար մեծ անակնկալ մը. վարժարանիս տնօրէնութիւնը գեղեցիկ մտա-յղացումը ունեցած էր պատուելու մանկապարտէզի տնօրէնուհի Սոնիա Գազանճեանը՝ գնահատելով անոր 25 տարուան անսակարկ աշխատանքն ու ծառայութիւնը, որ մեծապէս նպաստեց մանկապարտէզի նիւթական եւ ուսումնական մակարդակներու բարելաւման, արդիականացման, յառաջխաղացքին եւ ընդարձակման: Այս առիթով, մեծարեալին յանձնուեցան 25 տարուան աշխատանքը հաստատող գնահատագիր մը եւ պատշաճ նուէրներ:

Յետմիջօրէին տեղի ունեցաւ միջնակարգի հանդէսը: Հայ Քոյրերու վարժարանին յատուկ է աւարտական հանդէսէն առաջ՝ շրջանաւարտ դասարանի աշակերտական պատարագը՝ վեր առաքելու համար գոհաբանական աղօթքը եւ փառք տալու Աստուծոյ, աշակերտներուն վայելած ամէն տեսակի բարիքներուն համար:

Արդարեւ, Կիրակի, Յունիս 8ի առաւօտեան, Կլենտէյլի Հայ կաթողիկէ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին ցնծաց, երբ վարժարանի հունձքը նուիրաբերուեցաւ խորան: Աշակերտները իրենց տարազներով քալեցին դէպի եկեղեցի, առաջնորդութեամբ Հայ կաթողիկէ եկեղեցւոյ առաջնորդ Միքայէլ եպիսկոպոս Մուրատեանի, ժողովրդապետ Անտոն վրդ. Նորատունկեանի, ուսուցիչներու եւ դպիրներու, շարականներու երգեցողութեամբ մուտք գործելով տաճար, ուր ծնողները կը սպասէին անհամբեր, գոհունակութեան եւ փառաբանութեան զգացումներով լի:

Աշակերտները մասնակցեցան Ս. պատարագին. օրուան պատարագիչն էր Միքայէլ եպս. Մուրատեան, որ քարոզը հասցէագրեց շրջանաւարտներուն՝ զանոնք խրախուսելով ապագայ յաջողութիւններու հեռանկարով, վստահեցնելով, որ անոնք արդէն իսկ զինուած են իրենց թռիչքը ապահովող երկու թեւերով՝ քրիստոնէութեամբ եւ ազգային գիտակցութեամբ:

Աշակերտներուն կողմէ սրտի խօսք կարդացին Թալիա Սողոմոնեան (անգլերէն) եւ Արսէն Մարգարեան (հայերէն): Յետ պատարագի, տեղի ունեցաւ կոկիկ հիւրասիրութիւն մը եկեղեցւոյ «Գուլումճեան» սրահին մէջ:

Յուզումնալից արարողութեան աւարտին, ծնողք, աշակերտ եւ դաստիարակ, հոգեկան մեծ բաւարարութեամբ վերադարձան տուն՝ կրկին հանդիպելու յաջորդ շաբաթ՝ աւարտական պաշտօնական հանդիսութեան ընթացքին:

Շաբաթ, Յունիս 14ի յետմիջօրէին, Հայ Քոյրերու վարժարանի 2013-14 տարեշրջանի շրջանաւարտներու պաշտօնական հանդէսը տեղի ունեցաւ վարժարանիս «Դանիէլեան» սրահին մէջ: Հանդիսութեան ներկայ էին գերապայծառ տէրը, առաքինազարդ քոյրերը, ուսուցիչներ, հիւրեր, ծնողներ եւ հոծ բազմութիւն մը: Շրջանաւարտներուն կողմէ Տէրունական աղօթքի, ապա հայկական եւ ամերիկեան քայլերգներու ներկայացումով հանդիսութիւնը սկիզբ առաւ եւ շարունակուեցաւ պաշտօնական խօսքերով՝ գերապայծառ հօր, տնօրէնուհի քոյր Լուսիայի,

Շար.ը էջ 19

# ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՄԵՐՏԻՆԵԱՆ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ




Տարի մը եւս աւելցաւ Մերտինեան Հայ Աւետարանական Վարժարանի կեանքին վրայ, տարի մը՝ լի բեղուն աշխատանքով, յաջող իրագործումներով եւ նորանոր յաջողութիւններով:

2013-2014 ուսումնական տարեշրջանը սկսաւ Օգոստոս ամսուն՝ ցանքով.

Մերտինեան վարժարանի բերրի հողին մէջ ծլեցան ու ծաղկեցան 200-է աւելի հայ մանուկներու միտքերը, Աստուծոյ խօսքով ու շնորհքով աճեցան ու հասունցան անոնց հոգիները, եւ ահա, Յունիս է եւ, ինչպէս Սուրբ Գիրքը կ'ըսէ՝ «Ամէն բանի ժամանակը կայ», ուրեմն ցանքը հնձելու ժամը հասած է:

Ուրբաթ, 13 Յունիս, 2014-ի երեկոյեան ժամը 6:30ին տեղի ունեցաւ Մերտինեան վարժարանի Նախակրթարանի եւ Միջնակարգի բաժիններուն վկայականաց բաշխման հանդիսութիւնը՝ վերանորոգուած եւ լրիւ կահաւորուած Արամ եւ Անայիս Տ. Պուլղուրճեան հանդիսասրահին մէջ, ներկայութեամբ Հոգաբարձական կազմի անդամներուն, Վեր. Գէորգ Թերեանի, սրահի բարերարներ՝ Տէր եւ Տիկ. Արամ եւ Անայիս Պուլղուրճեաններու, Մերտինեան մեծ ընտանիքի զանազան մարմիններու ներկայացուցիչներուն, հպարտ եւ երջանիկ ծնողներու, բարեկամներու, ուսուցիչներու եւ աշակերտներու:

Հանդէսը սկսաւ շրջանաւարտներու եւ իրենց դաստիարակ ուսուցիչներու յաղթական մուտքով սրահ՝ ուր հաւաքուած ներկաները անհամբեր կը սպասէին զանոնք: Շրջանաւարտները նախ կատարեցին ամերիկեան եւ հայկական ազգային քայլերգներու երգեցողութիւնը, ապա գրաւեցին իրենց տեղերը՝ Ե. կարգի 2 բաժիններու 29 աշակերտները բեմին վրայ, իսկ Ը. կարգի 13 աշակերտները վարը: Վեր. Գ. Թերեանի բացման աղօթքէն ետք սկսաւ յայտագրի գործադրութիւնը:

Նախ Ե. կարգի աշակերտները խմբովին արտասանեցին հայերէնով՝ Ս. Կապուտիկեանի «Խօսք իմ Որդուն» քերթուածը, եւ անգլերէնով՝ «My Graduation» ապա, Ե. կարգի երկու բաժիններուն մէջ բարձրագոյն միջին ձեռք բերող 3 աշակերտներ կարդացին իրենց ուղերձները՝ Րէպէքա Գասարճեանը եւ Նաթալի Պալըքեանը անգլերէն լեզուով, իսկ Լարք Գապաքեանը՝ հայերէնով: Ի վերջոյ, անոնք ստացան իրենց վկայականներն ու մրցանակները՝ ձեռամբ տնօրէնուհի Տիկ. Լինա Արսլանեանի եւ իրենց դաստիարակներուն՝ Տիկ. Մարգրիտ Մեղրոյեանի եւ Տիկ. Արթինէ Նազարեանի:

Հոգաբարձութեան խօսքը փոխանցեց կազմի անխոնջ եւ բծախնդիր ատենապետ՝ Դոկտ. Վահէ Նալպանտեանը, որ ծնողներուն ուղղած բարի գալուստի եւ շնորհաւորական խօսքերէն ետք քանի մը խրատականներ տուաւ շրջանաւարտներուն. անոնցմէ կարեւորագոյնն էր՝ «Յաջողութիւնը դիւրին կամ կրճատուած ճամբայ չունի. անոր բանալին յարատեւ աշխատանքն է»:

Յաջորդ բեմ բարձրացողները եղան վարժարանի շնորհալի երգչախումբի անդամները, որոնք խանդավառեցին ներկաները հոգեւոր եւ հայկական ժողովրդային երգերու փունջով մը՝ առաջնորդութեամբ իրենց երաժշտութեան ուսուցչուհիին՝ Տիկ. Վիքթորիա Աբրահամեան Էլիասիի:

Օրուան պատգամաբերն էր Կիլիկիա եկեղեցւոյ աւագ հովիւ՝ Վեր. Գէորգ Թերեանը. ան իր հաղորդական եւ մտերմիկ ոճով բացատրեց, որ կեանքի մէջ պէտք է ունենալ յաղթողի կամ յաջողած անձի կեցուածք. ան յատկապէս շեշտեց՝ «Մտածէ՛ եւ գտի՛ր թէ ի՞նչ կ'ուզես ընել. որոշումիդ հաւատա՛, յոռետես մի՛ ըլլար, սիրով եւ խանդավառութեամբ կատարէ՛ գործդ եւ անպայման պիտի յաջողիս»:

Յայտագրի վերջին մասով ելոյթ ունեցան Ը. կարգի շրջանաւարտները:

Անոնք նախ խմբովին արտասանեցին Անդրանիկ Ծառուկեանի «Ուխտ Արարատին» քերթուածը. յետոյ դասարանի երկու բարձրագոյն միջին ձեռք բերող աշակերտները կարդացին իրենց հրաժեշտի խօսքերը՝ Տիլըն Պուչաքեանը անգլերէնով, իսկ Մարիաննա Պետրոսեանը՝ հայերէնով: Երրորդ բարձրագոյն միջին ունեցողը՝ Դաւիթ Արզումանեանը դպրոցին նուիրեց Ը. կարգի աշակերտներուն վերջին տարուան դպրոցական կեանքը ներկայացնող նկարներով կազմուած ցուցատախտակ մը: Վերջապէս անոնք ստացան իրենց վկայականներն ու մրցանակները՝ ձեռամբ տնօրէնուհի Լ. Արսլանեանի եւ իրենց դաստիարակ ուսուցչին՝ Պր. Ֆրետրիք Սայաթեանի:

Վերջին խօսք առնողը եղաւ վարժարանի տնօրէնուհին, որ իր անդուլ աշխատանքով եւ դրական վերաբերմունքով կ'առաջնորդէ այս կրթական օճախը:

Ծնողներուն, պատկան մարմիններուն եւ ուսուցիչներուն ուղղուած շնորհակալական եւ շնորհաւորական խօսքերէն ետք, ան իր վերջին գնահատանքն ու թելադ-

Շար.ը էջ 19

# ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ 2013-2014 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍՆԵՐՈՒ ՀՈՒՆՁՔԸ

*ՍՈՆԱ ՊԱՏԱԼԵԱՆ*

*Սահակ-Մեսրոպ վարժարանի Մանկամսուրի եւ Մանկապարտէզի շրջանաւարտից հանդէսը տեղի ունեցաւ Յունիս 6, 2014ի երեկոյեան, դպրոցիս շրջափակին մէջ:*

*Առաջին առիթով բարեգալուստի խօսքեր ուղղուեցան հայերէնով եւ Անգլերէնով, Լիւսի Ստեփանեանի եւ Թամար Միճեանի կողմէ: Ապա մանկամսուրի եւ մանկապարտէզի աշակերտները մուտք գործեցին եւ կատարեցին դրօշակի արարողութիւնը, Ամերիկեան ուխտը եւ Հայկական քայլերգը: Յաջորդաբար ունկնդրեցինք քաղցրահնչիւն խմբերգներ եւ արտասանութիւններ՝ բոլորին մասնակցութեամբ:*




*Պահն էր լսելու պարախառն տրամախօսութիւնը, որուն մէջ Ծաղիկ դասարանի աշակերտները կը ծրագրէին ապագային ըլլալ շինարարներ, աստղագէտներ եւ ուսուցիչներ. նաեւ վայելեցինք հայկական պարը:*

*Տնօրէն Ինճէճիքեան խօսք առնելով ողջունեց ներկաները եւ իր երախտագիտական խօսքերը ուղղեց ծնողներուն, որոնք իրենց զաւակները վստահած են Սահակ-Մեսրոպ վարժարանին, որպէսզի քրիստոնեայ միջավայրի մէջ անոնք դաստիարակուին միտքով եւ հոգիով:*

*Ծաղիկ դասարանի փոքրիկները իրենց վկայականի յատուկ տարազներով բեմ բարձրացած. անոնց վկայականներու բաշխումը կատարեցին տնօրէնն ու դաստիարակ Թ. Միճեանը:*

*Շրջանաւարտները դիմաւորեց Ա. դասարանի դաստիարակ Մարալ Պոյաճեանը, որ յայտնեց, թէ ինք պատրաստ է մեծ ուրախութեամբ զիրենք ընդունելու Ա. դասարան: Տնօրէնը գնահատեց մանկամսուրի եւ մանկապարտէզի փոքրիկները, ինչպէս նաեւ բոլոր ուսուցիչները, որոնք անսակարկ նուիրումով կ'աշխատին եւ կը դաստիարակէն փոքրիկները փոքր հասակէն, որպէսզի ըլլան տիպար հայեր եւ քրիստոնեաներ: Ուսուցիչները եւս պարգեւատրուեցան ծաղկեփունջերով: Ապա փակման աղօթքը կատարեց վեր. Յովսէփ Մաթոսեանը:*




*Սահակ-Մեսրոպ վարժարանի նախակրթարանի եւ միջնակարգի վկայականաց բաշխման հանդիսութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, Յունիս 15, 2014ի երեկոյեան, Փասատինայի Հայ Նազովրեցի եկեղեցւոյ մէջ: Ծնողներ, հիւրեր ու բարեկամներ կը փութային վայելելու օրուան յայտագիրը:*

*Առաջին առիթով, դրօշակակիրներ Աւօ Աքեան, Ալեքս Ածիլածեան, Հրակ Էքմէքճեան, Սեւան Գրիգորեան եւ Քրիսչըն Լամպաճեան մուտք գործեցին սրահ եւ բեմին վրայ զետեղեցին դրօշակները: Ապա շրջանաւարտները մուտք գործեցին եւ գրաւեցին իրենց տեղերը: Ե. կարգէն Դաւիթ Զեպէեան եւ Սօսէ Մինասեան կատարեցին Ամերիկեան եւ Հայկական ուխտերը, ապա ազգային քայլերգները*

*Շար.ը էջ 19*

# «ՓՈՔՐԻԿ ՀՐԵՇՏԱԿՆԵՐ» ՇԱԲԱԹՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՒԱՐՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԸ



*Հայ ժողովրդի դարաւոր կեանքի ճանապարհին կրթութիւնն ու հոգեւոր հաւատը գոյապայքարի յաղթաթուղթ են դարձել: Այդ գործում իրենց լուրջ առաքելութիւնն ունեն սփիւռքում Մայր Եկեղեցու հովանու ներքոյ գործող հայկական դպրոցները, որոնցից է Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի առաջնորդանիստ Ս. Ղեւոնդեանց մայր տաճարի «Փոքրիկ Հրեշտակներ» շաբաթօրեայ վարժարանը: Այն չորս տարի առաջ Թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի օրհնութեամբ վերակազմաւորուելով՝ գործում է առաջնորդարանի լուսաւոր յարկի ներքոյ:*

*«Փոքրիկ Հրեշտակներ» շաբաթօրեայ վարժարանի գործունէութիւնն ուղղուած է մէկ նպատակի՝ նուիրուել հայապահպանութեան կարեւորագոյն գործին, պատրաստել, դաստիարակել հայ ոգով մեծացող, ազգային ու հոգեւոր արժանապատւութեամբ տոգորուած պատանիներ ու աղջիկներ:*

*Հաստատութիւնը հնարաւորութիւն է տալիս ոչ միայն սովորելու հայոց լեզուն, այլեւ ճանաչելու պատմական, հոգեւոր ժառանգութիւնը, մօտ լինելու հայի ինքնութեանը եւ սիրելու այն, ինչն աւանդ ենք ստացել մեր նախնիներից, գիտակցելու, որ իւրաքանչիւր սերունդ առաքելութիւն ունի՝ անաղարտ պահել-պահպանել մեր սրբազնասուրբ լեզուն եւ պատասխանատւութեամբ վերաբերուելու հայ մնալու կոչմանը:*

*Հայերէն ուսուցման բարձր որակի ապահովում, ինչպէս նաեւ մարդկային լաւագոյն յատկանիշների սերմանում. ահա այս նպատակի ու գաղափարների իրագործումը վերածուել է նուիրեալ առաքելութեան, որին ձեռնամուխ է եղել դպրոցի մանկավարժական անձնակազմը՝ տնօրէն, բարեշնորհ Յովհաննէս սարկաւագ Գումրույեանի գլխաւորութեամբ:*

*Դպրոցում դասաւանդում են բարձրագոյն կրթութեամբ, բազմամեայ աշխատանքային փորձ, մանկավարժական հմտութիւններ եւ կարողութիւններ ունեցող ուսուցիչներ, ովքեր տիրապետում են ուսուցման նոր մեթոդներին ու հնարքներին: Առաջնորդարանին կից գործող գիտակրթական յանձնախումբը՝ ղեկավարութեամբ դոկտոր Էլլի Անդրէասեանի, ապահովում է նաեւ ուսուցիչների տարեկան վերապատրաստումը:*

*2014 թ-ի Յունիսի 14-ին տեղի ունեցաւ առաջին դասարանցիների «Հրաժեշտ այբբենարանին» եւ 5-րդ աւարտական դասարանի աշակերտների «Աշխարհի եօթ հրաշալիքներ» խորագրով միջոցառումը: Բարիգալստեան խօսքից յետոյ Տ. Խաժակ քահանայ Շահբազեանը հրաւիրեց Թեմի աւագագոյն հոգեւորականներից՝ դոկտոր Տ. Զաւէն աւագ քահանայ Արզումանեանին աղօթքով սկսելու յայտագիրը: Տաճարի լուսաւոր պատերի ներքոյ «Փոքրիկ Հրեշտակներն» արտասանում եւ երգում էին մայրենի լեզուով՝ միեւնոյն ժամանակ խոստանալով փայփայել ու պահպանել այն: Աշակերտների ներկայացրած յայտագիրը յուզիչ էր, տպաւորիչ, որի ընթացքում ակնառու էր երեխաների ձեռք բերած գիտելիքներն ու պաշտամունքը դէպի մեր բազմադարեայ մայրենին:*

*Հանդէսին ներկայ Թեմի առաջնորդ, գերաշնորհ Տ. Յովնան արք. Տէրտէրեանն իր խօսքում բարձր գնահատեց եւ իր օրհնութեանն արժանացրեց կրթօճախի տնօրինութեանը, ուսուցչական կազմին, ծնողներին ու աշակերտներին՝ յորդորելով պահպանել եւ աւելացնել այն հոգեւոր սնունդը, ինչը ձեռք էին բերել ուսումնական տարուայ ընթացքում:*

*Հանդիսութեան աւարտին դպրոցի տնօրէն, բարեշնորհ Յովհաննէս սարկաւագ Գումրույեանը նշեց, որ Ս. Ղեւոնդեանց մայր Տաճարը եւ «Փոքրիկ Հրեշտակներ» շաբաթօրեայ դպրոցն այն մեծ իրագործումների մի փոքրիկ մասն են, որ կատարւում է Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմից ներս՝ ժրաջան առաջնորդ, բարձրաշնորհ Տ. Յովնան արք. Տէրտէրեանի ղեկավարութեամբ: Իսկ աշակերտներին յիշեցնելով բայրոնեան յայտնի տողերը, յորդորեց ամուր պահել մեր աստուածատուր, մեսրոպաշունչ մայրենին:*

*Վերջում առաջին դասարանի շրջանաւարտներն ստացան նուէրներ, ինչպէս նաեւ «Տառաճանաչութեան վկայականներ», իսկ 5-րդ դասարանի սաները՝ «Աւարտական վկայականներ»:*

*2013-14 ուսումնական տարին աւարտուեց: «Փոքրիկ Հրեշտակներ» շաբաթօրեայ դպրոցի համար այն լի էր բազմաթիւ ձեռքբերումներով ու յաջողութիւններով: Ճիշտ է, աշակերտները մեկնեցին հանգստի, սակայն դպրոցի ողջ անձնակազմը լծուել յաջորդ տարուայ բազմաբնոյթ աշխատանքների նախապատրաստմանը, որի հերթական մեկնարկը տեղի է ունենալու այս տարուայ Օգոստոսին:*

## Ինչու է Յովիկ Աբրահամեանը նոմենկլատուրան պաշտպանում

Շարունակուած էջ 2-էն

Վլադիմիր Գասպարեանը, առաւել եւս Նախագահ Սերժ Սարգսեանը: Վերջինս, իհարկէ, սկզբունքօրէն դէմ չէ Յովիկ Աբրահամեանին իշխանութիւնը թողնելու հեռանկարին, սակայն՝ միմիայն իր սցենարով եւ ապագայ իշխանութեան իր տեսլականի շրջանակում: Այս խնդիրը նա անցկացնում է նաեւ նախկին Նախագահ Ռոբերտ Քոչարեանի հետ յարաբերութիւնների պրիզմայով, որի համատեքստում գոնէ այս պահին այդքան էլ միանշանակ չի թւում Յովիկ Աբրահամեանին իշխանութեան ժառանգորդ դարձնելու տարբերակը:

Այս տեսանկիւնից Վլադիմիր Գասպարեանը նրա համար իսկապէս առանցքային ֆիգուրի դեր է կատարում, որովհետեւ ի դէմս նրա, Ոստիկանութիւնը մնացել է այն միակ համակարգը, որի վրայ կարող է լիարժէքօրէն յենուել: Թէ նոմենկլատուրայի, թէ քաղաքական յենարանը հանդիսացող ՀՀԿ-ի եւ թէ բանակի պարագայում նա գործ ունի, ըստ էութեան, երկիշխանութեան հետ, քանի որ անցած 7 տարիներին այդպէս էլ չկարողացաւ այդ համակարգերի վրայ ունեցած նախկին Նախագահի ազդեցութիւնը լիարժէքօրէն չէզոքացնել եւ դրանք ամբողջապէս իրեն ենթարկել:

Հենց դա էր պատճառը, որ Սերժ Սարգսեանն այդպէս էլ չփորձեց մոնոլիտ իշխանութիւն ձեւաւորել՝ նախապատւութիւնը տալով կառավարելի քաոսի մեթոդաբանութեամբ յարաբերական իշխանութիւնը պահելու տարբերակին:

Մամուլում արդէն գրուել է, որ Յովիկ Աբրահամեանի վարչապետ դառնալուց յետոյ Վլադիմիր Գասպարեանը մի քանի անգամ հրաժարականի դիմում է ներկայացրել, որոնք, սակայն, չեն ընդունուել Նախագահ Սարգսեանի կողմից: Որքանով է այս տեղեկատւութիւնը համապատասխանում իրականութեանը, գիտեն միայն ոստիկանապետն ու Նախագահը:

Սակայն հաշուի առնելով վարչապետի հետ Ոստիկանապետի ունեցած յարաբերութիւնների առանձնայատկութիւնները, դա բացարձակապէս անհիմն չի թւում: Եւ եթէ այդ աղաղակող հակասութիւնները տեսնելով հանդերձ՝ Նախագահը չի ուզում ազատուել Գասպարեանից, նշանակում է՝ վերջինս այդ կարգավիճակում դեռ պէտք է իրեն: Ինքնին հրաժարական ներկայացնելը տակտիկական քայլ է Ոստիկանապետի կողմից՝ ստուգելու իր նկատմամբ Նախագահի վստահութեան չափը: Եւ ըստ ամենայնի՝ Սերժ Սարգսեանը Գասպարեանի համար իրեն հանգիստ եւ ազատ զգալու բաւարար փորա է ապահովում:

Գասպարեանի դերը ներիշխանական վերադասաւորումներում, փաստօրէն, դառնում է Յովիկ Աբրահամեանին հակակշռելը եւ նրա նկատմամբ ինչ-որ իմաստով վերահսկողութեան իրականացումը: Այս փուլում դա ուղղակի անհրաժեշտութիւն է, քանի դեռ գործող Նախագահը վերջնականապէս չի պարզել իր յարաբերութիւնները նախկին Նախագահի հետ եւ չի ըմբռնել, թէ Քոչարեանի պլաններում ինչ դեր է վերապահուել հենց Յովիկ Աբրահամեանին: Մանաւանդ՝ այս փուլում, երբ գործող իշխանութեան տարբեր օղակներին ուղղուած հրապարակային կոշտ քննադատութիւններով նախկին Նախագահն անընդհատ յիշեցնում է իր մասին, իսկ վարչապետը, թէկուզ իրոնիայով, յայտարարում է, թէ դէմ չէ Քոչարեանի հնարաւոր վերադարձին:

Հենց այս անորոշութիւնն իր համար պարզելու անհրաժեշտութեամբ էր պայմանաւորուած նաեւ Սահմանադրական բարեփոխումների յանձնաժողովի գործունէութիւնը եւս երեք ամսով երկարաձգելու Նախագահի որոշումը: Թերեւս դա այն ժամկէտն է, որի ընթացքում վերջնականապէս պարզ կլինի՝ Նախագահը գնալու է իշխանութիւնը յանձնելո՞ւ ճանապարհով, թէ՝ այն պահպանելու համար սահմանադրական աճպարարութիւններին ապաւինելու: Դրանից էլ պարզ կը դառնայ թէ որքանով կը բացուեն դէպի ոստիկանութիւն, բանակ տանող ճանապարհները Յովիկ Աբրահամեանի համար:

«ՀԵՏՔ»

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

ՎԱՐՁՈՒ ԽԱՆՈՒԹ
Փասատինայի հայկական շրջանին մէջ
յարմար պայմաններով վարձու է
որեւէ գործի համար: 1300 sq. feet,
վարձքը՝ $1,200 տոլար:
1442 E. Washington Blvd., Pasadena, CA 91104
Մանրամասնութեան համար հեռաձայնել՝
(626) 538-5454

## ԱՆՀԵՏԱՑԱԾ ԿՕՇԻԿՆԵՐԸ

Շարունակուած էջ 14-էն

հաւատարմութիւնը, նուիրուածութիւնը երկրին, աշխատասիրութիւնը եւ կառուցողական ոգին, բարձրաձայն ներողութիւն խնդրելով պատահածի համար: Կեանքումս այսքան իմ անունը չէր հոլովուել ու խոնարհուել, մինչ այդ օրը յիշուեց:

-Այդ գովասանական խօսքերը հօ քեզ համար կօշիկ չէին դառնար, մի բան որոշուե՞ց թէ ոչ:

-Սիրելի Ռուբէ՛ն, ի՞նչ անհամբերն ես, եթէ թոյլ տաս, կ՛ասեմ շարունակութիւնը, անմիջապէս կարգադրուեց նոյն կօշիկներից գնեմ ընկերութեան հաշուին: Ամէն անգամ այս դէպքը յիշելիս ծիծաղս է գալիս եւ մտածում եմ, թէ ինչ տարօրինակ մարդիկ կան պախարակելի եւ որեւէ առարկութեամբ ոչ արդարանալի:

## Կ.ՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ

Շարունակուած էջ 14-էն

Թովմա Շիկահերը, եւ Սահակ Փափազեանը, «դասելով նոցա աշխարհականների շարքը եւ զրկելով հայ եկեղեցուն անդամակցելու իրաւունքից»: Պայքարը քաշքշուեցաւ մինչեւ 1950-ի վերջը երբ կախակայեալներն ու կարգալոյծները, առանց հայ եկեղեցւոյ վերին իշխանութեան արտօնութեան, վերջին ճիգով մը պատրիարքական ապօրէն ընտրութեան ձեռնարկել փորձեցին, անտեսելով Ամենայն Հայոց կաթողիկոսին սաստերը:

Ամենայն Հայոց կաթողիկոսը վճռական վերջին քայլ մը առնելով 1950-ի Նոյեմբերին դիմեց ուղղակի Թուրքիոյ Հանրապետութեան Նախագահ Ճելալ Պայարին, բողոքի խիստ հեռագիր մը յղելով ու բացարձակապէս անընդունելի նկատելով Իսթանպուլի կուսակալին անհարկի եւ անօրէն միջամտութիւնը Հայ Եկեղեցւոյ գործերուն մէջ իբր «անընդունելի ոտնձգութիւն» (ՀԱՍԿ 1950 էջ 356):

Նոյն հեռագիրով Հայրապետը «վճռաբար կը բողոքէր» տրուած հրահանգին դէմ եւ յոյս կը յայտնէր որ Թուրքիոյ Նախագահը «պիտի կարենար ջնջել» կատարուած միջամտութիւնը Ազգային Սահմանադրու-թեան ուժով որ հիմը եղած էր նախորդ Մեսրոպ Պատրիարք Նարոյեանի 1927 թուի ընտրութեան: Կաթողիկոսի կոչովի պահանջքին վրայ եւ Թուրքիոյ Նախագահ Ճելալ Պայարի արտօնութեամբ 1950 Դեկտեմբեր 2-ին պատգամաւորական ժողով կը գումարուէր Տեղապահի նախագահութեամբ եւ Պատրիարք կ՛ընտրուէր Գարեգին Արքեպիսկոպոս Խաչատուրեան, վերջ տալով Թուրքիոյ Հայոց Պատրիարքութեան կնճիռին:

### Ներկայ Կացութիւնը

Ներքին տագնապ մըն ալ Կ.Պոլսոյ Հայոց Պատրիարքութիւնը անցուց եւ տակաւին կը ճգնի դուրս գալ անկէ մեր օրերուն եւս: Ամեն. Մեսրոպ Բ. Մութաֆեան Պատրիարքի առողջական անդարմանելի վիճակը տարիներէ ի վեր Աթոռը թափուր թողած է, եւ ներքին հասկացողութեամբ կայանալիք նոր պատրիարքի մը ընտրութեան անհրաժեշտութիւնը տակաւին կը մնայ խնդրական չորս տարիներէ ի վեր: Պետական նոյն միջամտութիւնը ինչպէս անցեալին, հիմա եւս եկաւ խանգարելու հայոց պատրիարքական ընտրութիւններու ընթացքը, որովհետեւ պատրիարքարանի վարչութիւնն ու կրօնական ժողովը չկրցան համաձայնութիւն գոյացնել համայնքի միւս հոսանքի ներկայացուցիչներուն հետ մնալով զգոյշ եւ խոհեմ պետական միջամտութիւնը չհրաւիրելու իրենց ներքին գործերուն մէջ:

Ներքին անաղմուկ հասկացողութիւն եւ հանդուրժողութիւն կրնար ներքնապէս լուծում մը գտնել եւ Աթոռակից Պատրիարքի մը ընտրութիւնը յաջողցնել որպէս բացառիկ պարագայ: Եւ սակայն աղմուկն ու անհարկի հակընդդէմ դիրքերը արդարեւ պետութեան աչքին մեծ երեւցան ու ներքին հարց մը զգուշութեամբ լուծելու պարտքը հրամցուցին պետութեան: Անշուշտ հիմնական հարցը դժբախտ Ամեն. Պատրիարք Հօր մինչեւ օրս անկեալ վիճակն է, անյոյս եւ սակայն ի կեանս, որուն համար երկրորդ պատրիարք մը ընտրել սահմանադրական չէ որքան ատեն որ Պատրիարքը կ՛ապրի: Բարեբախտաբար առանց յաւելեալ միջամտութեան, Թուրք պետութեան հաճութեամբ Պատրիարքական Ընդհանուր Փոխանորդի ժամանակաւոր պաշտօնը առայժմ կասեցուց յաւելեալ վտանգ կամ խառնակչութիւն՝ սպասելով յաջորդ պատրիարքի ընտրութեան:

### ԱՊԱՔԻՆՈՒՄ

Ընկ. Սարգիս Օհանեան ենթարկուած է յաջող սրտի գործողութեան մը: Այժմ ան ապաքինման շրջանը կը բոլորէ իր բնակարանին մէջ (Texas): Շուտափոյթ եւ կատարեալ ապաքինում կը մաղթենք իրեն:

### ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Սարգիս Օհանեանի սրտի յաջող գործողութեան ենթարկուելուն առթիւ՝ Տէր եւ Տիկ. Ժոզէֆ եւ Ռիթա Գալանճեաններ արագ ապաքինում կը մաղթեն իրենց բարեկամին: Առ այդ $100 կը նուիրեն «Մասիս»ին:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680    F: (626) 797-6863
Email: massis2@earthlink.net

www.massisweekly.com

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ



ՄԱՐԻ ՏԷՐՎԻՇՕՂԼԵԱՆԻ (մահացած Հալէպ) մահուան քառասունքին առթիւ, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, Յուլիս 6, 2014, Փասատինայի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ, յաւարտ Սբ. Պատարագի:

Խնդրողներն են՝
Տէր եւ Տիկին Յարութ Տէրվիշօղլեան եւ զաւակները
եւ համայն հարազատներ եւ ազգականներ:
Ցիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:

## ՄԱՀԱԽՕՍԱԿԱՆ
## ՏԻԿ. ՄԱՐԻ ՊԻՊԷՐԵԱՆ ՏԷՐՎԻՇՕՂԼԵԱՆԻ ՔԱՌԱՍՈՒՆՔԻ ԱՌԹԻՒ

Քառասուն օրեր անցան Տիկ. Մարի Պիպէրեան Տէրվիշօղլեանի մահուան, որ պատահած էր Հալէպ՝ 4 Յունիս 2014 -ին խոր վիշտ պատճառելով ամուսնոյն, զաւակներուն, հարսերուն, թոռներուն, քոյրերուն, եղբօրը ու համայն հարազատներուն ու բարեկամներուն:

Տիկ.Մարի տէրվիշօղլեան իր համեստութեամբ ու փափկանկատ բնաւորութեամբ սիրուած ու յարգուած անձնաւորութիւն էր ազգականներուն ու հարազատներուն կողմէն, ուրայատուկ ու անմեղ ժպիտով լոյս ու սէր կը ներշնչէր շուրջիններուն:

Ան իր կեանքի ընթացքին ՝ եղաւ գիտակից կողակից ամուսնոյն , եւ օրինակելի հայրենասէր մայր իր զաւակներուն: Ազգասիրութեամբ ու հայրենասիրութեամբ դաստիարակած իր զաւակներու մէջ սերմանած հունտերը բեղմնաւորուեցան երբ անոնք դարձան ազգօգուտ հայորդիներ անդամակցելով Ն.Ս.Մ.Մ-ի Հ.Մ.Մ-ի եւ ՈՒՐՖԱՅԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ մշակութային ու մարզական միութիւններուն որպէս վարչական, եւ գործօն անդամներ Հալէպի ու Միացեալ Նահանգներուն մէջ իրենց նպաստը բերելով հայապահպանման եւ հայ մշակոյթը վառ պահելու սրբազան գործին ու առաքելութեան:

Տիկ. Մարի Տէրվիշօղլեանի մահուան գոյժը տխրութեան մատնեց բոլոր ազգականներն ու ծանօթները անոր խնկելի ու պայծառ յիշատակը անթառամ պիտի մնայ մեր եւ իր հարազատներու յիշողութեան մէջ: Հողը թեթեւ գայ վրան, անոր լուսաւոր հոգին հանգչի երկնային խաղաղութեան մէջ առ յաւէտ:

Իսկ աննշան եթէ մնայ
Երկրի մէկ խորշն հողակոյտն իմ,
Եւ յիշատակս ալ թառամի,
Ահ, ա՛յն ատեն ես կը մեռնիմ:

ՍԳԱԿԻՐ ՄԸ

## ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

*Շարունակուած էջ 17-էն*

երգուեցան բոլորին մասնակցութեամբ:

Աղօթքներ արտասանեցին Ե. կարգէն Տիգրան Արաբեան եւ Հայկօ Ապաճեան: Բարի գալուստի խօսքը կատարեցին Ը. կարգէն Գարին Պոսնոյեան եւ Թամար Տօնոյեան, որոնց յաջորդեց Ե. դասարանի խմբային արտասանութիւնը՝ Անդրանիկ Ծառուկեանի «Ուխտ Արարատին»ը:

Պահը հասած էր Ե. դասարանի վկայականաց եւ մրցանակներու բաշխման, որ կատարուեցաւ տնօրէնին եւ Հալի Բուրհասանեանի ձեռամբ:

Տնօրէն Ինճէճիքեան բեմ հրաւիրեց վեր. Հայկ Տարաքճեանը, որ իր կարգին շրջանաւարտ է Սահակ-Մեսրոպ վարժարանէն, որպէսզի փոխանցէ օրուան պատգամը: Դասախօսը շեշտեց սէրը՝ Աստուծոյ հանդէպ, եւ տիպար հայ քրիստոնեաներ ըլլալը՝ միշտ գործածելով հայերէն լեզուն եւ մշակոյթը, միեւնոյն ժամանակ ըլլալով ուսումնատենչ անհատներ:

Ապա հնչեցին միջնակարգի ուղերձները, որոնք կարդացուեցան ամենայն հարազատութեամբ եւ անկեղծ զգացումներով, անգլերէնով՝ valedictorian Թալիա Գազանճեանի, իսկ հայերէնով salutatorian՝ Ռիթա Թեճիրեանի կողմէ: Նաեւ, տեսաերիզի ցուցադրութիւն մը կատարուեցաւ շրջանաւարտներուն կողմէ:

Միջնակարգի վկայականներու եւ մրցանակներու բաշխումը կատարեցին տնօրէնն ու ճեք Աղոյեանը:

Տնօրէնը ներկայացուց այս տարուան հունձքը՝ նախակրթարանէն 9 շրջանաւարտ, իսկ միջնակարգէն՝ 14, եւ գնահատեց անոնց պատուաբեր արդիւնքները: Ապա խօսքը ուղղելով շրջանաւարտներուն՝ յորդորեց զանոնք միշտ յիշել իրենց հայ ըլլալու իրականութիւնը եւ հայ լեզուն ու մշակոյթը վառ պահել իրենց սիրտերուն մէջ: Տնօրէնը երախտագիտական խօսքեր ուղղեց նաեւ Dream Fund-ին, որ այս տարի եւս 90,000 տոլարի

## ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ

*Շարունակուած էջ 16-էն*

դաստիարակներ Լինտա Գանտիլեանի եւ Ուիլեըմ Պասեթի կողմէ, իսկ աշակերտներուն կողմէ ուղերձ արտասանեցին Մեղրի Մարգարեան (հայերէն) եւ Ալէն Եուսուֆ-Ղարիպեան (անգլերէն):

Աւանդութիւն դարձած աշակերտական խորհուրդի խօսքը փոխանցեց այս տարեշրջանի ատենապետուհի, շրջանաւարտ Նայիրա Մարութեանը. ան կարդաց նոյն տարուան ընթացքին իրենց իրագործած նուաճումներուն մասին, ապա իր պաշտօնը հանդամանօրէն փոխանցեց յառաջիկայ տարուան նորընտիր ատենապետուհիին՝ Ալիք Տէր Պետրոսեանին:

Հանդիսութիւնը շարունակուեցաւ հայերէն եւ անգլերէն արտասանութիւններով եւ խմբերգներով, որոնց դաշնամուրով կ՚ընկերակցէր վարժարանի երաժշտութեան ուսուցչուհի Վարդուհի Պաղտասարեան: Հանդիսութիւնը համեմուեցաւ Սթեֆընի Գալաճեանի եւ Նայիրա Մարութեանի՝ դաշնամուրի վրայ ներկայացուցած գեղեցիկ երաժշտութիւններով: Ապա գնահատագիրներ յանձնուեցան արժանաւորներուն, իսկ Նախագահական գնահատագիրի արժանացողներէն Կարէն Քէչէճեանը ներկայացուց իր սրտի խօսքը:

Հանդիսութեան աւարտին, վկայականներու բաշխումէն ետք, Արմինէ Շէրիկեան յայտարարեց եւ գոչեց աւարտականները՝ «2014 տարուան շրջանաւարտներ». անոնք ծափողջիւններու եւ ուրախութեան բացագանչութիւններու ներքոյ մէկ կողմ նետելով իրենց գլխարկները՝ հեռացան սրահէն:

Ուրախութիւնը շարունակուեցաւ շքեղ ընթրիքով, պարերով եւ ճոխ երաժշտութեամբ:

Հայ Քոյրերու վարժարանի 2014 ուսումնական տարեշրջանը այսպիսով վերջ գտած էր՝ աւելցնելով վարժարանի պատմութեան մէջ տարի մը եւս իր յաջողութիւններով եւ վերելքներով: Կը շնորհաւորենք բոլոր ուսուցիչները, որոնք անսակարկ իրենց աշխատանքը նուիրաբերեցին պատուաբեր սերունդ մը պատրաստելու: Կը շնորհաւորենք ծնողները, որոնք ջանք չխնայեցին իրենց զաւակներու դաստիարակութեան համար. նաեւ յաջողութիւն կը մաղթենք շրջանաւարտներուն, որոնք պիտի ըլլան Հայ Քոյրերու վարժարանի դեսպանները՝ իրենց գացած իւրաքանչիւր երկրորդական վարժարանին մօտ:

## ՄԵՐՏԻՆԵԱՆ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

*Շարունակուած էջ 16-էն*

րանքները յայտնեց ընթացաւարտ աշակերտներուն:

Վեր. Գ. Թերեանի օրհնութեան աղօթքով վերջ գտաւ հանդիսութիւնը, որմէ ետք ներկաներու ստուար խումբ մը ուղղուեցաւ դէպի Կլենտէյլի «Րէյմընտ եւ Անի Գույումճեան» սրահը, ուր ուրախութիւնը, երգերն ու պարերը շարունակուեցան մինչեւ ուշ գիշեր:

Մերտինեան վարժարանի տարեվերջի հունձքը իրականութեան մէջ սկսած էր երկու շաբաթներ առաջ: Ուրբաթ, 30 Մայիսին տեղի ունեցաւ Նախամանկապարտէզի ամավերջի հանդէսը, ուր 3-4 տարեկան փոքրիկներ, որոնք 10 ամիսներ առաջ հազիւ կը խօսէին, ներկայացուցին գեղեցիկ գեղարուեստական յայտագիր մը: Անոնք իրենց աղօթքներով, երգերով, արտասանութիւններով եւ պարերով հմայեցին բոլոր ներկաները անխտիր. անսահման էր մանաւանդ հրճուանքը մեծ մայրերուն ու մեծ հայրերուն՝ ի լուր իրենց թոռնիկներու երկլեզու ազատ արտայայտութեան: Յայտագրի վերջաւորութեան, Նախամանկապարտէզի Բ. Կարգի աշակերտները իրենց «Մնաս Բարով»ը ըսին դպրոցական այս առաջին հանգրուանին, պատրաստ՝ իրենց տեղերը գրաւելու Ծաղիկ Դասարանին մէջ:

Շաբաթ, 7 Յունիս, 2014-ին տեղի ունեցաւ Մերտինեան վարժարանի Մանկապարտէզի վկայականաց բաշխման հանդէսը, վարժարանի հանդիսասրահին մէջ: 21 շրջանաւարտներ բեմ բարձրացան եւ ներկայացուցին սքանչելի յայտագիր մը, որ սկսաւ Տէրունական աղօթքի եւ հայկական քայլերգի երգեցողութեամբ եւ ամերիկեան ուխտի կատարողութեամբ: Շուրջ մէկ ժամ տեւողութեամբ յայտագիրը լի էր աղօթքներով, երգերով, արտասանութիւններով, պարերով եւ թատերական ներկայացումով մը, որու վերջաւորութեան «Հայ Մայրը» այնքա՜ն գոհունակ սրտով փառք կու տար Աստուծոյ՝ իր զաւակներուն հայերէն խօսելուն համար... Օրուան պատգամախօսն էր Պատ. Դաւիթ Ագիզեանը:

Ի վերջոյ, 21 շրջանաւարտները ստացան իրենց առաջին վկայականը՝ ձեռամբ տնօրէնուհի Տիկ. Լ. Արսլանեանի եւ դաստիարակ ուսուցչուհի՝ Տիկ. Մարիժան Գէորգեանի:

Հանդէսը վերջ գտաւ Պատ. Դաւիթ Ագիզեանի օրհնութեան աղօթքով:

Բարի երթ՝ մեր շրջանաւարտներուն եւ հանգիստ, ուրախ արձակուրդ բոլորին:

յատկացում կատարեց վարժարանին, ինչպէս նաեւ բոլոր բարերարներուն, որոնք սատար հանդիսացան դպրոցի բարելաւման՝ նիւթապէս թէ բարոյապէս:

Հանդէսը փակուեցաւ վեր. Վաչէ Էքմէքճեանի օրհնութեան աղօթքով:



# 100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ ԶՈՒԻՑԵՐԻՈՅ ՄԱՄՈՒԼՆ ՈՒ ՀՆՉԱԿԵԱՆ ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐԸ

*Շարունակուած էջ 8-էն*

*ականաւոր գործիչի մահուան 45-ամեակին նուիրուած «Սովետական Հայաստան» թերթի 5 Յունուար 1965 թիւին մէջ Փրոֆ. Գէորգ Ղարիբջանեանի հրապարակած յօդուածէն[75] հաւաստի կը տեղեկանանք, որ Արշակ Զուրաբովը, այո, կալանաւորուելով տաժանավայր աքսորուած է, սակայն փաստօրէն կրցած է Սիպերիայէն փախուստի դիմել, եւ ապաստանիլ նախ Կ. Պոլիս, ապա՝ Եւրոպա: Կ. Պոլիս կեցութեան շրջանին ան սերտ կապեր հաստատած եւ համագործակցած է Հնչակեան Կուսակցութեան հետ: Ահաւասիկ, մեր նիւթին առնչութեամբ այն արժէքաւոր տեղեկութիւնները, զորս կը քաղենք իր վերոյիշեալ մահախօսականէն. «Իբրեւ գործօն անդամը Ռուսաստանի Սօցիալ Դեմօկրատական Բանւորական կուսակցութեան՝ նա դտնուել է այդ կուսակցութեան առաջին շարքերում, խաղացել է կարեւոր դեր եւ, իբրեւ այդպիսին, ընտրուել Պետական Դումայի անդամ, որտեղ նա (Արշակ Զուրաբովը) արտասանեց ժամանակին այնքան աղմուկ հանած իր այդ ճառը ռուս զօրքի դէմ: Բռնապետութեան ճանկերից ազատուելու համար նա շուտով անցաւ Տաճկաստան, ապա Եւրոպա: Պոլսում գործում էր հնչակեանների հետ, գրելով նրանց թերթերում[76] եւ կարդալով դասախօսութիւններ»[77]:*

*Արդարեւ, Արշակ Զուրաբով 1915 թուականի Յունիսին մեծ հաւանականութեամբ կը գտնուէր Եւրոպա: Հայկական աղբիւրներէ ան ստոյգ տեղեկացած էր Երիտթուրք կառավարութեան հայոց դէմ իրագործած համատարած կոտորածներուն, ազգի ընտրանիի եւ հայ մտաւորականութեան դէմ սանձազերծուած ձերբակալութիւններուն, ինչպէս նաեւ աքսորներուն մասին: Անմիջականօրէն հետեւած էր Հնչակեան Քսաններու դատավարութեան եւ, ի վերջոյ, Օսմանեան ռազմական ատեանի կողմէ կախաղանի մահուան դատապարտուելու եղելութեան, ուստի ցաւի եւ ցասումի, ընվզումի ու բողոքի իր արդար ձայնը բարձրացուցած էր ակնարկուած այդ կուռ յօդուածով, որ լայն արձագանգ գտած էր Զուիցերիոյ ընկերվարական, նաեւ՝ իտալական մամուլի էջերուն մէջ:*

*Անշուշտ պիտի չզարմանանք, եթէ յօդուածին բնագիրը ըլլար շարադրուած ռուսերէն լեզուով, եւ թերեւս ալ տպագրուած՝ ռուս ընկերվարական թերթերուն մէջ, որոնցմէ թարգմանաբար արտատպած ըլլար զուիցերիական մամուլը: Սոյնը ընդամէնը ենթադրութիւն մըն է: Բայց շատ աւելի հաւանական է համոզուած ըլլալ այն փաստով, որ Զուրաբով Հնչակեան Քսան Կախաղաններուն վերաբերեալ իր յօդուածը ուղղակի շարադրած ըլլար գերմաներէն լեզուով՝ փոխանցելով զայն Զուիցերիոյ ընկերվարական մամուլին՝ հրատարակելու նպատակով: Անհաւանական չէ կարծել, որ Զուրաբով պահ մը գտնուէր նաեւ Զուիցերիա , այլապէս՝ Գերմանիա, ուր Թուրքիոյ հետ ռազմական դաշնակցութեան եւ համապատասխան գրաքննութեան պատճառով տեղւոյն թերթերուն մէջ անկարելի կը դառնէր նման յօդուածի մը հրապարակումը, ուստի՝ զայն կը տրամադրէր չէզոք երկրի մը պայմաններուն մէջ խօսքի ազատութիւն վայելող Զուիցերիոյ ընկերվարական մամուլին:*

*Զուրաբովի կենսագրութեան վերաբերեալ տուեալներու ժլատութեան պատճառով, մեզի, առ այժմ, կարելի չեղաւ համապատասխան վկայութիւններով հաստատել իր ստացած գերմանական կրթութեան կամ գերմաներէն լեզուին քաջատեղեակ ըլլալու մասին: Բայց նկատի ունենալով, որ հակառակ իր համոզումներով հակադաշնակցական[79] մը ըլլալուն, ինչպէս այս մասին կը վկայէ նաեւ «Յառաջ»ի մէջ տպագրուած իր մահախօսականը, Հայոց Ազգային Խորհուրդը 1918ին Համօ Օհանջանեանին հետ ուղղակի զինք նշանակած էր դիմելու գերմանական եւ աւստրիական կառավարութեանց հեղինակաւոր մարմիններուն՝ Հայկական Հարցով բանակցութիւններ վարելու նպատակով: Ուստի՝ միանգամայն տրամաբանական կը թուի, որ Արշակ Զուրաբով հայերէնին, վրացերէնին, ռուսերէնին հետ կը տիրապետէր նաեւ գերմաներէն լեզուն:*

*Հիմնուելով «Պերներ Թակվախթ» թերթի յայտարարութեան վրայ, ուր կ՛ըսուի թէ «Բ. Դումայի պատգամաւոր Արշեֆֆ Սուրաքով մեզի կը գրէ», աւելի հաւանական կը դարձնէ ենթադրելը, որ ան իր սոյն յօդուածը առաքած է մէկէ աւելի թերթերու: Նկատի ունենալով նաեւ այն փաստը, որ «Ֆօլքսրեխթ» շաբաթ մը ետք կը հրատարակէր նոյն յօդուածը, ի դէպ, ամբողջական տարբերակով, ուստի չէր կրնար ըլլալ «Պերներ Թակվախթ»էն վերցուած արտատպում մը:*

*Առաջին հարցադրումն այստեղ որ մեր մտքին մէջ կը յառաջանայ այն է, թէ ինչո՞ւ համար Զուիցերիոյ թերթերը մէկ եւ նոյն յօդուածը տպագրած են տարբեր վերնագրերով: Բնականաբար, հեղինակին ձեռագիրը մեր տրամադրութեան տակ չունենալու պատճառով, գրեթէ անկարելի կը դառնայ վերահաստատել բնագրային բուն վերնագիրը, այլապէս ստիպուած պիտի ըլլանք հաւանական ենթադրութիւններ ընել ըսելով՝ գուցէ հեղինակը ինքն իր յօդուածին տուած է երկու կամ մէկէ աւելի վերնագրեր՝ առաքելով զանոնք տարբեր հասցէներու, եւ կամ՝ նշուած թերթերուն խմբագրութիւնները, մեկնելով յօդուածին բովանդակութենէն, իրաւունք վերապահած են տալու անոր համապատասխան վերնագիր մը: Այնպէս կը թուի, որ ենթախորագիրը՝ «Քսան Թրքահպատակ Ընկերներու Սպանութեան (Առթիւ)» հեղինակին կողմէ տրուած ըլլայ իբրեւ ընդհանուր վերնագիր մը, բայց նկատի ունենալով որ նշուած թերթերու ընթերցողներուն շրջանակները ֆրանսախօս Զուիցերիոյ, գերմանախօս Պերնի եւ Ցիւրիխի մէջ տարբեր են, իսկ «Ֆօլքսրեխթ»ի յօդուածն ալ ստոյգ «Պերներ Թակվախթ»էն եղած արտատպում մըն էր, խմբագրական իրաւունքով յարմար տեսնուած է աւելցնելու այլ վերնագիր մը, ընթերցողին մօտ կրկնութեան կամ արտատպումի մը տպաւորութիւնը չփոխանցելու նպատակով: Բոլոր պարագաներուն, սոյնը այնքան ալ հետաքրքրական հարց մը չէ, որքան ամբողջ յօդուածին տպագրուելու փաստը եւ մեզի համար ներկայացող իր բովանդակութեան կարեւորութիւնը՝ Հնչակեան Քսան Կախաղաններու եղելութենէն շուրջ հարիւր տարի ետք:*

*(Շարունակելի 3)*

[57] Անհաւանական չէ կարծել, որ «Լա Սանթինէլ» թերթի խմբագրութիւնը թերեւս ստացած ըլլալու էր Զուրաբովի կողմէ ստորագրուած Հնչակեան Քսան Կախաղաններու վերաբերեալ յօդուածը: Սակայն զայն ֆրանսերէնի վերածելով ամբողջութեամբ տպելու փոխարէն նախընտրած էր բաւարարուիլ ամփոփ հաղորդելով կատարուած ոճիրին լուրը, միաժամանակ անոր կցելով հայ ժողովուրդին դէմ թուրք բարբարոսներու իրագործած Եղեռնի եւ Վանի հերոսական ինքնապաշտպանութեան լուրերը: Զուրաբովի նշուած յօդուածին հանգամանօրէն պիտի անդրադառնանք յաջորդ էջերուն մէջ:

[58] Տե՛ս, BT, 182, 7.08.1915.

[59] Տե՛ս, VR, 187, 13. 08. 1915.

[60] Պէտք է նկատի ունենալ, որ այստեղ «terkisch» բացատրութիւնը անպայման ազգութեամբ «թուրք» չի նշանակեր, այլ՝ թրքահպատակ, ինչպէս ջանացինք թարգմանել: Նման եզրը գերմաներէնի մէջ յաճախ նկատի ունի անձին ապրած երկիրը կամ հպատակութիւնը, եւ ոչ անպայման ազգային ծագումը:

[61] Տոքթ. Եղիկ Ճէրէճեանի անտիպ մէկ աշխատութենէն տեղեկացանք, որ նմանատիպ յօդուած մըն ալ «Քսան Հայ Սոցիալիստներու (Կախաղանի Վրայ) Կախուիլը Թուրքիոյ Մէջ» խորագրով լոյս տեսած է Իտալիոյ ընկերվարական «Avanti» թերթի 16 Օգոստոս 1915-ի թիւին մէջ: Այս մասին տես նաեւ՝ Aliprandi, Emanuele, 1915, Cronaca di un Genocido: La tragedia degli armeni raccontata dai giornali italiani dell'epoca, Roma, 2009, p. 72ff. Ծանօթանալով նշուած թերթի յօդուածին եւ զայն համեմատելով Զուիցերիոյ մամուլին մէջ տպագրուածներուն հետ, ստոյգ կրնանք ըսել, որ խմբագրութեան կողմէ կատարուած քանի մը լուսաբանումներէն բացի, «Հնչակեան Քսան Կախաղաններու» մասին հրատարակուածը «Պերներ Թակվախթ»-էն կատարուած Բ. Դումայի անդամ «Arsceff Suracoff»-ի ստորագրած նոյն յօդուածին մէկ արտատպութիւնն է: Այս առնչութեամբ, «Avanti» թերթի խմբա-գրութիւնը դիտել կու տայ, որ նշուած լուրը կուսակցական ընկերոջ մը կողմէ ստացուած է Ցիւրիխէն: Բ. Դումայի պատգամաւոր Arceff Suracoff (sic!), որ սերտ կապ ունեցած է կախաղանի մահուան ենթարկուած սոցիալիստ ընկերներուն հետ, խիստ հետաքրքրական տեղեկութիւններ կը հաղորդէ իր ստորեւ տպագրուած յօդուածին մէջ: Այս մասին պիտի անդրադառնանք աւելի ուշ:

[62] Զուրաբով Արշակ Գերասիմի մասին «Երկրորդ Դումա» խորագրով հրապարակուած է շահեկան յօդուած մը համացանցային հետեւեալ կայքէջին մէջ. http://archive.ankakh.com/2010/09/54792:

[63] Հմմտ., Ղարիբջանեան Գ., Արշակ Զուրաբեան, Մահուան 45-Ամեակին Առթիւ, Սովետական Հայաստան, Երեւան, 5 Յունուար 1965:

[64] Արշակ Զուրաբով յեղափոխական գաղտնի գործունէութեան մէջ նաեւ օգտագործած է «Ռաշիդ-Բէկ» կեղծանունը: Այս մասին տե՛ս Արշակ Զուրաբեանի մասին Գէորգ Ղարիբջանեանի վերոյիշեալ յօդուածը:

[65] Տես այս մասին «Երկրորդ Դումա» խորագրով վերոյիշեալ յօդուածը:

[66] 1918 թուականին Պերլինի մէջ Համօ Օհանջանեանի եւ Արշակ Զուրաբեանի՝ գերմանական ԱԳՆ ուղարկած զեկուցագրերուն մէկ մասը հրատարակուած են Johannes Lepsius, Deutschland und Armenien (1914-1918), Sammlung diplomatischer Aktenstücke, Potsdam, 1919 գիրքին մէջ:

[67] Վանիկեան Գ., Մարքսիզմը Հայ Կեանքին Մէջ, «Կայծ», Ապրիլ-Մայիս, 1913, էջ 324-333:

[68] Զոհրաբեան Ա., Մարքսիզմը Հայ Կեանքին Մէջ Յօդուածին Առթիւ (նամակ խմբագրութեան), «Կայծ», Յունիս, 1913 էջ 345-359:

[69] Վանիկ, Սօցիալ-Դեմօկրատ Հնչակեան Կուսակցութիւնը, «Կայծ», Յուլիս, 1913, էջ 9-21, Օգոստոս, էջ 33-40, Սեպտեմբեր, էջ 68-75: Սոյնը տես նաեւ՝ Արսէն Կիտուր, Սրբագրեցէք Յանուն Արդարութեան, Պէյրութ, 1956, 46-116: Այստեղ եւս պարտք կը զգանք երախտագիտական մեր զգացումները յայտնելու Տոքթ. Եղիկ Ճէրէճեանին՝ նշուած յօդուածները մեր տրամադրութեան փոխանցելուն համար:

[70] Տե՛ս վերը յղում թիւ 57, Զուրաբովի մասին՝ «Երկրորդ Դումա» յօդուածը:

[71] Տե՛ս Նոյնը:

[72] Ռուսական Բ. Դումայի ցրումը տեղի կ՛ունենայ 1907 թուականին, որուն կը հետեւի նոր ընտրական իրաւունքի մը դրուածքը: Սոյնը մեծապէս կը սահմանափակէ հողազուրկ գիւղացիութեան եւ կայսրութեան մէջ ոչ-ռուսական փոքրամասնութիւններուն իրաւունքները:

[73] Նոյնը:

[74] Տե՛ս, Մահախօսական՝ Արշակ Զոհրաբեան, «Յառաջ», Երեւան, 6 Յունուար 1920:

[75] Տե՛ս, Գ. Ղարիբջանեան, նոյն տեղը:

[76] Բացի «Կայծ» թերթէն, Ա. Զուրաբով, «Հնչակ»-ի մէջ Արշակ Զոհրաբեան եւ Ա. Զոհրաբեան ստո-րագրութիւններով հրատարակած է զոյգ մը յօդուածներ՝ «Հայկական Դատը եւ Տաճկահայաստանի Սոցիալիստների Հերթական խնդիրները» (Մայիս 1913) եւ «Դէպի Յեղափոխութիւն» (Մայիս 1914):

[77] Հմմտ. նոյնը:

[78] 1915 թուականի Փետրուար 14-19-ին, Լենինի գլխաւորութեամբ, Պերնի մէջ գումարուած է բոլշեւիկ-ներու արտասահմանեան բաժանմունքներու համաժողովը (ՌՍԴԲԿ): Անհաւանական չէ ենթա»դրել, որ Ա. Զուրաբով ալ մասնակցած ըլլար այս համաժողովին, եւ այս առթիւ, թերեւս մինչեւ խնդրոյ առարկայ յօդուածի հրապարակուիլը, գտնուած ըլլայ Զուիցերիոյ մէջ: Այս մասին, առ այժմ, դժբախտաբար, մեզի կը պակսին աւելի ճշգրիտ տեղեկութիւններ: Տեբս, Հայկական Սովետական Հանրագիտարան, Բեռնի Կոնֆերանս (ՌՍԴԲԿ), Բ, Երեւան, 1976, էջ 406:

[79] Տե՛ս, «Յառաջ», 1920: